



Ստրասբուրգ, 2020 թվականի ապրիլի 16

CDL-PI(2020)003
Միայն անգլերեն¹

«ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ՝ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՄԻՋՈՑՈՎ» ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
(ՎԵՆԵՏԻԿԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ)

ՎԵՆԵՏԻԿԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ՝
ԱՐՏԱԿԱՐԳ ԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ԿԱՐԾԻՔՆԵՐԻ ԵՎ ՋԵԿՈՒՅՑՆԵՐԻ
ՀԱՎԱՔԱԾՈՒ

¹ Սույն փաստաթուղթը թարգմանվել է Եվրոպական միության և Եվրոպայի խորհրդի կողմից Գործընկերություն հանուն լավ կառավարման ծրագրային ձևաչափի շրջանակներում ֆինանսավորվող և Եվրոպայի խորհրդի կողմից իրականացվող «Աջակցություն դատական բարեփոխումների իրականացմանը՝ Հայաստանում դատական իշխանության անկախության և արհեստավարժության ամրապնդումը» ծրագրի շրջանակներում:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- 1. ՆԵՐԱՇՈՒԹՅՈՒՆ3
- I. ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ..... 4
- II. Արտակարգ դրություն հայտարարելը. սահմանումը և էական պահանջները.....6
- III. Շեղումներ՝ մարդու իրավունքների պարտավորություններից 13
- IV. Արտակարգ դրության սահմանադրորեն ամրագրումը 15
- V. Արտակարգ դրություն հայտարարելը. իրավասությունները..... 17
- VI. Վերահսկողություն՝ արտակարգ դրություն հայտարարելու և այն երկարաձգելու նկատմամբ 17
 - ա. Խորհրդարանական վերահսկողություն 18
 - բ. Դատական վերահսկողություն..... 23
- VII. Արտակարգ դրության տևողությունը..... 26
- VIII. Արտակարգ միջոցների տևողությունը..... 27
- IX. Արտակարգ միջոցների շրջանակը..... 28
 - ա. Անհրաժեշտության և համաչափության սկզբունքները 29
 - բ. Երկարատև ազդեցություններ 29
 - գ. Հատուկ խնդիրներ 30
 - դ. Մեկնաբանություն..... 30
 - ե. Սահմանադրական փոփոխություն 30
 - զ. Տեղական ինքնակառավարման մարմինների մասով լիազորությունները..... 32
 - է. Ռազմական տրիբունալներ, իշխանություններ և զինված ուժեր 32
- X. Ընտրություններ արտակարգ դրությունների ընթացքում 34
 - ա. Ընդհանուր 34
 - բ. Սահմանադրական հանրաքվեներ 35
 - գ. Արտահերթ նախագահական ընտրությունները ռազմական և արտակարգ իրավիճակների ընթացքում..... 36
 - դ. Ընտրությունների հետաձգումը..... 36
 - ե. Ընտրական իրավունքի փոփոխությունները..... 38
- XI. Խորհրդարանի լուծարումը 39
- XII. Քաղաքական կուսակցությունների գործունեությունը 40
- XII. Օժանդակ նյութեր..... 42

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն փաստաթուղթը Վենետիկի հանձնաժողովի կողմից արտակարգ լիազորությունների և արտակարգ դրությունների վերաբերյալ ընդունված զեկույցներից/ուսումնասիրություններից վերցված քաղվածքների և տարբեր երկրներին բնորոշ համապատասխան սահմանադրական դրույթների և/կամ արտակարգ դրությունների մասին օրենքների (նախագծերի) վերաբերյալ կարծիքների հավաքածու է:

Հավաքածուն նպատակ ունի ծառայելու որպես հղման աղբյուր սահմանադրություններ և դատական համակարգի վերաբերյալ օրենսդրություն մշակողների, հետազոտողների, ինչպես նաև Վենետիկի հանձնաժողովի անդամների համար, որոնցից պահանջվում է պատրաստել մեկնաբանություններ և կարծիքներ այդպիսի խնդիրներին առնչվող օրենսդրության վերաբերյալ: Սույն հավաքածուի նախագծի մեջ պարունակվող տարրերին անդրադառնալիս խնդրում ենք մեջբերել բնօրինակ փաստաթուղթը, այլ ոչ թե այս հավաքածուն որպես այդպիսին:

Հավաքածուն կառուցված է թեմատիկ ձևով՝ Վենետիկի հանձնաժողովի կողմից այս ոլորտում տարբեր հիմնահարցերի վերաբերյալ ընդունված ընդհանուր ուղղությունների մատչելիությունը հեշտացնելու համար: Այնուամենայնիվ, դա չպետք է խանգարի Վենետիկի հանձնաժողովի անդամներին ներկայացնել նոր կամ ավելի վաղ ներկայացված տեսակետներից տարբերվող տեսակետներ, եթե դրա համար առկա է հիմնավոր պատճառ: Հավաքածուն պետք է դիտարկել զուտ որպես տեսակետ:

Ընթերցողը պետք է նաև տեղյակ լինի, որ կարծիքների մեծ մասը, որոնցից վերցված քաղվածքները մեջբերված են հավաքածուի մեջ, վերաբերում է առանձին երկրներին և հիմնված է այնտեղ տիրող իրավիճակի վրա: Հետևաբար, մեջբերումները պարտադիր չէ, որ լինեն կիրառելի այլ երկրներում: Սակայն սա չի նշանակում, որ դրանում պարունակվող առաջարկությունները չեն կարող արդիական լինել այլ համակարգերի համար ևս:

Վենետիկի հանձնաժողովի՝ այս հավաքածուի մեջ մեջբերված զեկույցներն ու ուսումնասիրությունները նպատակ ունեն ներկայացնել ընդհանուր չափանիշներ Վենետիկի հանձնաժողովի բոլոր անդամ և դիտորդ պետությունների համար: Ըստ այդմ, զեկույցներում և ուսումնասիրություններում արված առաջարկություններն ավելի ընդհանուր կիրառում կունենան՝ չնայած ազգային/տեղական իրավիճակների առանձնահատկությունը կարևոր գործոն է և այն պետք է պատշաճ կերպով հաշվի առնել:

Հավաքածուի յուրաքանչյուր մեջբերում ունի հղում, որը սահմանում է դրա ճշգրիտ տեղը կարծիքի կամ զեկույցի/ուսումնասիրության մեջ (ավելի վաղ ներկայացված կարծիքների դեպքում՝ պարբերության համարը, էջի համարը), ինչը ընթերցողին թույլ է տալիս գտնել դրանք հենց այն կարծիքի կամ զեկույցի/ուսումնասիրության մեջ, որից դրանք վերցվել են: Տեքստը կրճատելու համար՝ հետագա հղումների և ծանոթագրությունների մեծ մասը բացակայում է մեջբերումների տեքստից. ներկայացված է միայն համապատասխան պարբերության էական մասը:

Հավաքածուն անփոփոխ փաստաթուղթ չէ և պարբերաբար թարմացվելու է Վենետիկի հանձնաժողովի կողմից վերջերս ընդունված կարծիքների քաղվածքներով: Քարտուղարությունը երախտապարտ կլինի առաջարկների համար, թե ինչպես բարելավել այս հավաքածուի նախագիծը (venice@coe.int):

I. ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ

Օրինականության սկզբունքը –

6. Բացառություններ արտակարգ իրավիճակներում

Արդյո՞ք արտակարգ իրավիճակներում բացառություններն նախատեսված են օրենքով:

- i. Արդյո՞ք կան հատուկ ներպետական դրույթներ, որոնք կիրառելի են արտակարգ իրավիճակների ժամանակ (պատերազմ կամ այլ արտակարգ իրավիճակներ, որոնք սպառնում են ազգի կյանքին): Հնարավո՞ր է արդյոք նման իրավիճակներում ազգային օրենսդրությանը համաձայն շեղվել մարդու իրավունքներից: Որո՞նք են անհրաժեշտ հանգամանքներն ու չափանիշները՝ իրավիճակը որպես բացառություն որակելու համար:
- ii. Արդյո՞ք ազգային օրենսդրությունն արգելում է շեղումը որոշակի իրավունքներից նույնիսկ արտակարգ իրավիճակների ժամանակ: Արդյո՞ք շեղումները համաչափ են, այն է՝ սահմանափակվում են ստեղծված իրավիճակի կողմից խստորեն պահանջվող ծավալով, տևողությամբ, հանգամանքով և շրջանակով:
- iii. Արդյո՞ք գործադիրի՝ արտակարգ իրավիճակների պայմաններում լիազորությունների բնականոն բաշխումից շեղվելու հնարավորությունները նույնպես սահմանափակվում են տևողությամբ, հանգամանքով և շրջանակով:
- iv. Ո՞րն է արտակարգ իրավիճակի որոշման ընթացակարգը: Արդյո՞ք կա խորհրդարանական վերահսկողություն և դատական վերանայում արտակարգ իրավիճակի առկայության և տևողության, ինչպես նաև այդ ժամանակ թույլ տրված շեղումների շրջանակի նկատմամբ:

[...] 51. Պետության ու նրա ժողովրդավարական ինստիտուտների ապահովությունը և նրա պաշտոնատար անձանց ու բնակչության անվտանգությունը կենսական նշանակություն ունեցող հանրային և մասնավոր շահեր են, որոնք արժանի են պաշտպանության և կարող են հանգեցնել մարդու որոշակի իրավունքներից ժամանակավոր շեղման և լիազորությունների արտակարգ բաշխման: Այնուամենայնիվ, արտակարգ լիազորությունները չարաշահվել են ավտորիտար կառավարությունների կողմից՝ իշխանությունը պահպանելու, ընդդիմությանը լռեցնելու և, առհասարակ, մարդու իրավունքներն սահմանափակելու նպատակով: Այդ իսկ պատճառով էական նշանակություն ունեն այդպիսի լիազորությունների տևողության, հանգամանքների և շրջանակի խիստ սահմանափակումները: Պետական անվտանգությունն ու հասարակության ապահովությունը կարող են արդյունավետորեն ապահովվել միայն ժողովրդավարության միջոցով, որը լիովին հարգում է իրավունքի գերակայության սկզբունքը: Դա պահանջում է խորհրդարանական վերահսկողություն և դատական վերանայում՝ հայտարարված արտակարգ իրավիճակի առկայության և տևողության նկատմամբ՝ չարաշահումներից խուսափելու նպատակով:

52. «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրի», «Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի» և «Մարդու իրավունքների ամերիկյան կոնվենցիայի» համապատասխան դրույթները համանման են: Դրանք նախատեսում են շեղումների հնարավորությունը (ի տարբերություն երաշխավորված իրավունքների սովորական սահմանափակումների) միայն խիստ բացառիկ հանգամանքներում: Շեղումները հնարավոր չեն «այսպես կոչված բացարձակ իրավունքներից, դրանք են՝ կյանքի իրավունքը, խոշտանգումների և անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի արգելքը, և ստրկության արգելքը, ինչպես նաև այն սկզբունքը, որ միայն օրենքը կարող է սահմանել հանցանքը և նախատեսել պատիժը (nullum crimen, nulla poena)»: II.Ա.6.i կետն ամփոփում է այս

պայմանագրերի պահանջները:

[Իրավունքի գերակայության ստուգացուցակ, [CDL-AD\(2016\)007](#)]

Հետևյալ կետերը կարող են իրականացվել՝ արտակարգ դրության համար որոշակի իրավական չափանիշներ առաջարկելու նպատակով:

ա. Արտակարգ իրավիճակները, որոնք կարող են հանգեցնել արտակարգ դրության հայտարարման, պետք է հստակ սահմանվեն և կարգավորվեն սահմանադրությամբ: Այլ կերպ ասած, պետք է հստակ նշել իրական և վերահաս վտանգի առկայությունը: Վերոնշյալ պայմանն արտահայտված է մարդու իրավունքների երեք հիմնական պայմանագրերում (ՄԻԵԿ, ՔՔԻՄԴ, ՄԻԱԿ)՝ որպես «բացառիկ սպառնալիք»: Ըստ բացառիկ սպառնալիքի սկզբունքի՝ արտակարգ իրավիճակների պայմաններում մարդու իրավունքների չափանիշներից շեղումը օրինական է միայն «պատերազմի կամ ազգի կյանքին սպառնացող այլ արտակարգ դրության ժամանակ»:

բ. Պետք է խուսափել դե ֆակտո արտակարգ դրությունից, իսկ արտակարգ դրության ռեժիմը պետք է պաշտոնապես հայտարարվի: Մարդու իրավունքների երեք հիմնական պայմանագրերում համապատասխան պայման է համարվում ծանուցման պահանջը, որի միջոցով մյուս մասնակից պետությունները պետք է տեղեկացվեն դրանից բխող դրույթների և դրա պատճառների մասին:

գ. Սահմանադրությամբ պետք է հստակ նշվի, թե որ իրավունքները կարող են կասեցվել, և որ իրավունքներն են, որ թույլ չեն տալիս շեղում և պետք է պահպանվեն բոլոր հանգամանքներում: Մարդու իրավունքների երեք հիմնական պայմանագրերում (ՄԻԵԿ, ՔՔԻՄԴ, ՄԻԱԿ) շեղումներ չթույլատրող իրավունքների ցանկերը պարունակում են այդպիսի չորս իրավունք. դրանք են՝ կյանքի իրավունքը, խոշտանգումներից և անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքից կամ պատժից զերծ մնալու իրավունքը, ստրկությունից կամ կախյալ՝ անազատ վիճակից զերծ մնալու իրավունքը, ինչպես նաև քրեական օրենքների հետադարձ ուժի բացակայության սկզբունքը: Շեղումներ թույլ չտվող այդ չորս իրավունքները, որոնք կազմում են մարդու իրավունքների «անբաժանելի կորիզը», պետք է սահմանադրության մեջ հստակ ձևակերպվեն և հաստատվեն: Կարևոր կլինի նաև կամայական կալանքի դեմ նվազագույն երաշխիքների և արդար դատաքննության իրավունքը պաշտպանող այլ երաշխիքների ներառումը. բացի այդ, պետք է թույլատրվի ընդդեմ արտակարգ դրությամբ զբաղվող մարմինների ձեռնարկած քայլերի և գործողությունների դատարաններ դիմելը: Վերոնշյալ իրավունքներն ու երաշխիքները պետք է հասանելի լինեն բոլորին առանց խտրականության:

դ. Արտակարգ միջոցները և հիմնարար իրավունքներից ու ազատություններից շեղումները պետք է համաչափ լինեն վտանգին: Այլ կերպ ասած, շեղումները, սահմանափակումները և կասեցումները ընդունելի են միայն պատերազմի կամ ազգի կյանքին սպառնացող այլ արտակարգ դրության ժամանակ. բացի այդ, նման միջոցները պետք է համաչափ լինեն արտակարգ դրությանը: Համաչափության սկզբունքը ներառում է նաև այն, ինչը ՄԻԵԿ-ն անվանել է «ժամանակավորության սկզբունք», որը նշանակում է, որ արտակարգ դրության ժամանակ գործի դրվող միջոցները չեն կարող տևել ավելի երկար, քան հենց արտակարգ իրավիճակը, և դրանց սահմանափակումները պետք է կիրառվեն միայն արտակարգ իրավիճակից տուժած աշխարհագրական տարածքներում: Մյուս կողմից, արտակարգ դրության պայմաններում ձեռնարկված միջոցներից շատերը չեն ենթադրում մարդու իրավունքների չափանիշներից որևէ շեղում: Հատկապես դա վերաբերում է այն

միջոցներին, որոնք գործի են դրվում առավել ցածր մակարդակի արտակարգ դրության պայմաններում: Բավականին հաճախ, նման միջոցները միայն կարգավորում են մարդկանց վարքագիծը կամ նրանց սեփականության օգտագործումը, կամ գործադիրը կարող է իրավասու լինել ձեռնարկելու այնպիսի միջոցներ, որոնք հակառակ դեպքում կպահանջեին օրենսդրական գործողություններ:

Ե. Նույնիսկ արտակարգ դրության պայմաններում պետք է գերիշխի իրավունքի գերակայության հիմնարար սկզբունքը: Այլ կերպ ասած, ոչ ոք չպետք է կանգնի դատարանի առջև՝ բացառությամբ այն դեպքերի, որոնք նախապես սահմանված են օրենքով:

[CDL-STD\(1995\)012](#), Արտակարգ լիազորություններ

II. Արտակարգ դրություն հայտարարելը. սահմանումը և էական պահանջները

Արտակարգ իրավիճակները ներառում են ինչպես մարդու իրավունքների սովորական չափանիշներից շեղումներ, այնպես էլ պետության տարբեր մարմինների միջև գործառնությունների և լիազորությունների բաշխման փոփոխություններ: Մարդու հիմնարար իրավունքներից շեղումները հատկապես կարևորագույն խնդիր են, քանի որ փորձը ցույց է տվել, որ մարդու իրավունքների ծանրագույն խախտումները հակված են տեղի ունենալ հենց արտակարգ իրավիճակների համատեքստում: Այնուամենայնիվ, ներկայի մարդու իրավունքների գլխավոր միջազգային փաստաթղթերը պարունակում են դրույթ՝ արտակարգ իրավիճակներով պայմանավորված շեղումների վերաբերյալ: Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների եվրոպական կոնվենցիան (ՄԻԵԿ, Հոդված 15) թույլ է տալիս շեղում կատարել «պատերազմի կամ ազգի կյանքին սպառնացող այլ արտակարգ դրության ժամանակ»: Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագիրը (ՔՔԻՄԴ, Հոդված 4) վերաբերում է «արտակարգ իրավիճակներին, որոնք սպառնում են ազգի կյանքին», իսկ Մարդու իրավունքների ամերիկյան կոնվենցիան (ՄԻԱԿ, Հոդված 27) վերաբերում է «պատերազմին, հանրային վտանգին կամ այլ արտակարգ իրավիճակներին, որոնք սպառնում են Մասնակից պետության անկախությանը կամ անվտանգությանը»:

Սահմանադրությունների մեծ մասը պարունակում է արտակարգ իրավիճակների վերաբերյալ դրույթներ: Երկրների փոքր մասում գոյություն չունի արտակարգ դրություն՝ որպես այդպիսին, սակայն առկա են դրույթներ, որոնք պետք է կիրառվեն պատերազմի, պատերազմի վտանգի կամ այլ արտակարգ իրավիճակների դեպքում: [...]

Երկրների փոքր մասում [...] գործում է արտակարգ դրության միայն մեկ տեսակ: [...] Այնուամենայնիվ, երկրների մեծ մասում առկա են արտակարգ դրության տարբեր տեսակներ, որոնք վերաբերում են տարբեր տեսակի արտակարգ իրավիճակներին՝ տվյալ իրավիճակի լրջությանը համաչափ: [...]

[CDL-STD\(1995\)012](#), Արտակարգ լիազորություններ

244. [...] Արտակարգ դրությունը բխում է այն հայտարարությունից, որն արվել է երկրի համար էական վտանգ ներկայացնող արտակարգ իրավիճակին ի պատասխան: Որպես օրինակ կարելի է նշել բնական աղետները, քաղաքացիական խռովությունները, համաճարակը կամ տնտեսական ճգնաժամը: Արտակարգ դրություն հայտարարելը կարող է կասեցնել կառավարության որոշակի սովորական գործառնություններ կամ կարող է լիազորել պետական մարմիններին իրականացնել արտակարգ դրության նախապատրաստական միջոցառումներ և սահմանափակել կամ կասեցնել քաղաքացիական ազատություններն ու մարդու իրավունքները:

Որոշ իրավիճակներում հայտարարվում է ռազմական դրություն, ինչը թույլ է տալիս ռազմական ուժերին գործել ավելի մեծ մասշտաբով: Պաշտպանության գերատեսչությունը հատուկ լիազորություններ է ձեռք բերում արտակարգ դրություն հայտարարելու միջոցով, ինչը Պաշտպանության նախարարությանը թույլ է տալիս շրջանցել խորհրդարանական ընթացակարգերի մեծ մասը: Այդ իսկ պատճառով, օրենսդրությամբ պետք է նախատեսվեն ազգային իշխանությունների կողմից արտակարգ իրավիճակների չարաշահման կանխարգելման մեխանիզմներ: Այս հիմնարար սկզբունքը վերահաստատված է Եվրախորհրդի Խորհրդարանական վեհաժողովի թիվ 1713(2005) առաջարկության մեջ, որտեղ նշվում է, որ «ցանկացած ոլորտում բացառիկ միջոցառումները պետք է վերահսկվեն խորհրդարանների կողմից և չպետք է լուրջ խոչընդոտ հանդիսանան հիմնարար սահմանադրական իրավունքների իրացման համար»:

245. Յուրաքանչյուր երկիր ունի սեփական սահմանումն այն հանգամանքների վերաբերյալ, որոնք կարող են հանգեցնել արտակարգ դրության, դրան հաջորդող ընթացակարգերի վերաբերյալ, արտակարգ լիազորությունների սահմանափակումների վերաբերյալ կամ այն իրավունքների վերաբերյալ, որոնք կարող են կասեցվել: Այնուամենայնիվ, մշակվել են միջազգային նորմեր, որոնք կարող են ծառայել որպես օգտակար ուղղորդում:

[CDL-AD\(2008\)004](#), Զինված ուժերի ժողովրդավարական վերահսկողության մասին հաշվետվություն՝ ընդունված Վենետիկի հանձնաժողովի կողմից իր 74-րդ լիազումար նիստում (Վենետիկ, 2008 թվականի մարտի 14-15)

36. Լոուլեսի գործում ՄԻԵԴ-ը տվել է հետևյալ սահմանումը «ազգի կյանքին սպառնացող արտակարգ դրությանը»՝ «բացառիկ իրավիճակ կամ արտակարգ ճգնաժամ, որն ազդում է ողջ բնակչության վրա և սպառնալիք է ներկայացնում այն համայնքի կազմակերպված կյանքի համար, որը մտնում է տվյալ պետության կազմի մեջ»: Հետագայում, Բրաննիգանի և ՄքԲրայդի գործով դատարանը նշեց, որ «տվյալ պահի հրատապ պահանջների հետ նրանց անմիջական և շարունակական առնչության պատճառով ազգային իշխանությունները, սկզբունքորեն, ավելի լավ դիրքում են գտնվում, քան միջազգային դատավորը՝ ինչպես այդպիսի արտակարգ իրավիճակների առկայության, այնպես էլ այն կանխելու համար անհրաժեշտ շեղումների բնույթի և շրջանակի վերաբերյալ որոշում կայացնելու հարցում: Ըստ այդմ, այդ հարցում հայեցողության մեծ չափաբաժինը պետք է տրվի ազգային իշխանություններին: Այնուամենայնիվ, Պայմանավորվող կողմերը չունեն սեփական հայեցողությամբ որոշում կայացնելու անսահմանափակ լիազորություն: Դատարանը պետք է որոշում կայացնի այն մասին, թե արդյոք պետությունները շեղվել են, ի թիվս այլոց, ճգնաժամի հետևանքով «ստեղծված իրավիճակի կողմից խստորեն պահանջվող ծավալից»: Այսպիսով, ներքին հայեցողական լիազորություններն ուղեկցվում են եվրոպական վերահսկողությամբ»:

[CDL-AD\(2016\)037](#), Թուրքիա. 2016 թվականի հուլիսի 15-ի ձախողված հեղաշրջումից հետո ընդունված Արտակարգ դրության մասին N°s 667-676 օրենսդրական որոշումների վերաբերյալ կարծիք՝ ընդունված Վենետիկի հանձնաժողովի կողմից իր 109-րդ լիազումար նիստում 2016 թվականի դեկտեմբերի 9-10-ը

«27. Մարդու իրավունքների նախկին եվրոպական հանձնաժողովը սահմանել է այն հատկանիշները, որոնք պետք է առկա լինեն, որպեսզի իրավիճակը որակվի որպես արտակարգ՝

- վտանգը պետք է լինի իրական կամ վերահաս,
- դրա հետևանքները պետք է ընդգրկեն ամբողջ ազգը,
- պետք է վտանգված լինի կազմակերպված համայնքային կյանքը,

- ճգնաժամը կամ վտանգը պետք է լինի բացառիկ, այսինքն՝ ՄԻԵԿ-ի կողմից անվտանգության, առողջության և հասարակական կարգի պահպանության համար սահմանված սովորական միջոցները կամ սահմանափակումները պետք է լինեն լիովին անբավարար: 1961 թվականին ՄԻԵԿ-ն արդեն շեշտել էր, որ իրավիճակը պետք է պարունակի «սպառնալիք՝ ուղղված համայնքի կազմակերպված կյանքին»:

28. Նմանատիպ սկզբունքներ սահմանված են Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրի 4-րդ հոդվածում: Մարդու իրավունքների և բացառիկ դրությունների հարցերով ՄԱԿ-ի Հատուկ զեկուցողը հաստատում է, որ պետությունները պետք է հարգեն հետևյալ սկզբունքները՝

- ժամանակավորություն, այսինքն՝ արտակարգ դրություն հայտարարելու բացառիկ բնույթը, սպառնալիքի բացառիկ բնույթը, որը պահանջում է, որ ճգնաժամն իրական, ընթացիկ կամ առնվազն վերահաս վտանգ ներկայացնի համայնքի համար,
- հայտարարություն, այսինքն՝ արտակարգ դրությունը հրապարակայնորեն հայտարարելու անհրաժեշտությունը. հաղորդակցություն, մասնավորապես՝ ընդունված միջոցների բովանդակության վերաբերյալ այլ պետություններին և համապատասխան պայմանագրերի մշտադիտարկման մարմիններին տեղեկացնելու պարտավորությունը. համաչափություն, որը պահանջում է, որ ճգնաժամը վերացնելու համար ընդունված միջոցները համաչափ լինեն դրա լրջությանը,
- օրինականություն՝ արտակարգ դրության ժամանակ մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների սահմանափակումները պետք է մնան ազգային և միջազգային իրավունքի փաստաթղթերով հաստատված սահմաններում. ավելին, արտակարգ դրությունը չի ենթադրում իրավունքի գերակայության ժամանակավոր կասեցում և թույլ չի տալիս իշխանության ղեկին կանգնած անձանց գործել օրենքները խախտելով, քանի որ նրանք մշտապես սահմանափակված են այս սկզբունքներով,
- Անձեռնմխելիություն/աննյութականություն՝ հիմնարար իրավունքներ, որոնք ենթակա չեն որևէ շեղման նույնիսկ արտակարգ իրավիճակների ժամանակ՝ կյանքի իրավունքը, խոշտանգումների արգելքը, ստրկության արգելքը, օրենքների և այլ դատական երաշխիքների հետադարձ ուժի բացակայության սկզբունքը, իրավասուբյեկտության ճանաչման իրավունքը և մտքի, խղճի ու կրոնի ազատությունը:

29. Վենետիկի հանձնաժողովը մասնավորապես հղում է կատարում իր «Իրավունքի գերակայության ստուգացուցակին», որում այն սահմանել է արտակարգ իրավիճակներում բացառությունների չափանիշները [...]

[CDL-AD\(2016\)006](#), «Ազգի պաշտպանության մասին» Ֆրանսիայի սահմանադրական օրենքի նախագծի վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովի կողմից իր 106-րդ լիազումար նիստում (Վենետիկ, 2016 թվականի մարտի 11-12) ընդունված կարծիք

[CDL-AD\(2006\)015](#), Արտակարգ իրավիճակներում մարդու իրավունքների պաշտպանության մասին կարծիք, պրբ. 10

18. Օրենքի նախագծի 1-ին հոդվածի 1-ին մասը պարունակում է արտակարգ դրության սահմանումը, այն է.

Արտակարգ դրությունը պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, իրավաբանական անձանց (անկախ նրանց իրավական ձևից) և նրանց պաշտոնատար անձանց գործունեությունը կարգավորող հատուկ իրավական ռեժիմ է, որը հայտարարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության համաձայն Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում կամ դրա առանձին տարածքներում:

19. Ըստ Վենետիկի հանձնաժողովի՝ այս սահմանումը կարիք ունի հավելյալ հստակեցման: «Պետական կառավարման գործունեություն» հայեցակարգը բավականին անորոշ է: Նախագծի 7-րդ հոդվածի երկրորդ մասից երևում է, որ այս հայեցակարգը չի վերաբերում օրենքներին և դատական ակտերին: Արդյո՞ք վերջին սահմանափակումը կիրառվում է միայն ընդունված օրենքների և ընդունված դատական որոշումների նկատմամբ, թե՞ նաև ապագա օրենսդրական և դատական գործունեության նկատմամբ: «Իրավաբանական անձանց (անկախ նրանց բնույթից և իրավական ձևից)» հայեցակարգը նույնպես, կարծես, բավարար չափով հստակ չէ:

[CDL-AD\(2011\)049](#), Հայաստանի արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին օրենքի նախագծի վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովի կողմից իր 89-րդ լիազուսմար նիստում (Վենետիկ, 2011 թվականի դեկտեմբերի 16-17) ընդունված կարծիք

58. Վենետիկի հանձնաժողովն ընդունում է, որ դժվար է ճշգրիտ կանխատեսել և նկարագրել արտակարգ իրավիճակը. այսպիսով, սահմանման անորոշության աստիճանը թվում է անխուսափելի: Այն նախապայմանները, որոնք Սահմանադրությունը պարտադրում է արտակարգ դրություն հայտարարելու համար, ամեն դեպքում պետք է մեկնաբանվեն ՄԻԵԿ-ում և ԲԲԻՄԴ-ում պարունակվող սահմանումների լույսի ներքո: 36-1 հոդվածում առկա սահմանումը կարելի է մեկնաբանել՝ հաշվի առնելով եվրոպական չափանիշները: Այնուամենայնիվ, տեքստը կարելի է արդյունավետորեն բարելավել՝ հստակեցնելով, որ և՛ «հասարակական կարգի լուրջ խախտումների հետևանքով ստեղծված վերահաս սպառնալիքը», և՛ «հասարակական աղետին համարժեք իրադարձությունները» պետք է լինեն «այնպիսին, որ հնարավոր սպառնալիք հանդիսանան ազգի կյանքին»:

[CDL-AD\(2016\)006](#), «Ազգի պաշտպանության մասին» Ֆրանսիայի սահմանադրական օրենքի նախագծի վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովի կողմից իր 106-րդ լիազուսմար նիստում (Վենետիկ, 2016 թվականի մարտի 11-12) ընդունված կարծիք

73. Միայն Նախագահն է իրավունքի ուժով որոշում կայացնում արտակարգ դրություն հայտարարելու մասին, ինչպես նաև «արտակարգ դրությամբ պայմանավորված հարցերի վերաբերյալ» կարգադրագրեր տալու մասին (Հոդված 119): Թուրքիայի գործող Սահմանադրությունը նախատեսում է արտակարգ դրության երեք տեսակ՝ Նախարարների խորհրդի կողմից Նախագահի ղեկավարությամբ հայտարարված արտակարգ դրություն (Հոդված 119), բռնության համատարած գործողությունների և հասարակական կարգի լուրջ խախտումների հետևանքով հռչակված արտակարգ դրություն, որը ևս հայտարարվում է Նախարարների խորհրդի կողմից Նախագահի ղեկավարությամբ (Հոդված 120) և ռազմական դրություն, որը ևս հայտարարվում է Նախարարների խորհրդի կողմից Նախագահի ղեկավարությամբ (Հոդված 122): Արտակարգ դրության մասին Թուրքիայի Սահմանադրության այս կանոնակարգերը համապատասխանում են արտակարգ դրությանը վերաբերող հիմնական եվրոպական չափանիշներին: Տարբեր տեսակի արտակարգ իրավիճակների տարբերակումը լայն տարածում ունի բազմաթիվ երկրներում և համարվում է արդյունավետ լուծում. արտակարգ իրավիճակների տարբեր տեսակներ պահանջում են տարբեր միջոցների կիրառում:

74. Փոփոխությունների նախագիծը այլևս չի տարբերակում արտակարգ իրավիճակների տարբեր տեսակներ, այն ուժը կորցրած է ճանաչում 120-րդ, 121-րդ և 122-րդ հոդվածները և Նախագահին հնարավորություն է տալիս արտակարգ դրություն հայտարարել «պատերազմի ժամանակ, այնպիսի իրավիճակի դեպքում, որի հետևանքով կարող է պատերազմ սկսվել,

գորահավաքի, ապստամբության, հայրենիքի և Հանրապետության դեմ լուրջ ու իրական հարձակման, ներքին կամ արտաքին ծագման բռնությունների լայնածավալ գործողությունների դեպքում, որոնք սպառնում են երկրի և ազգի անբաժանելիությանը, բռնության համատարած գործողությունների ի հայտ գալու դեպքում, որոնք ուղղված են սահմանադրական կարգի կամ հիմնական իրավունքների և ազատությունների վերացմանը, բռնության գործողությունների և բնական աղետների, վտանգավոր համավարակային հիվանդությունների կամ տնտեսական ծանր ճգնաժամերի հետևանքով հասարակական կարգի խիստ տապալման դեպքում» (Փոփոխված հոդված 119):

[CDL-AD\(2017\)005](#), Թուրքիա. Վենետիկի հանձնաժողովի կողմից իր 110-րդ լիազուստ նիստում (Վենետիկ, 2017 թվականի մարտի 10-11) ընդունված կարծիք՝ 2017 թվականի հունվարի 21-ին Ազգային մեծ ժողովի կողմից ընդունված և 2017 թվականի ապրիլի 16-ին Ազգային հանրաքվեի ներկայացվելիք Սահմանադրության փոփոխությունների մասին

34. (...) մարդու իրավունքներից և ազատություններից շեղումներ կարող են թույլ տրվել միայն պատերազմական վիճակի կամ «ազգի կյանքին սպառնացող» այլ արտակարգ դրության մասին «պաշտոնապես հայտարարելուց» հետո (տե՛ս սահմանադրության նախագծի հոդված 121 և 122)»: Դրանք հնարավոր են միայն «այնքանով, որքանով անհրաժեշտ են ստեղծված իրավիճակի պայմաններում» («անհրաժեշտ սահմանների շրջանակներում» արտահայտությունը բավականաչափ պարզ չէ):

35. Այս դրույթում պետք է նշվեն նաև Սահմանադրության այն հոդվածները, որոնք չեն փոփոխվում պատերազմի կամ արտակարգ իրավիճակների ժամանակ:

[CDL-AD\(2007\)017](#). Մոնտենեգրոյի սահմանադրական նախագծի վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովի կողմից իր 71-րդ լիազուստ նիստում (Վենետիկ, 2007 թվականի հունիսի 1-2) ընդունված միջանկյալ կարծիք

68. (...) Վենետիկի հանձնաժողովի կարծիքով, կարևոր կլինի (...) նախևառաջ նշել, որ կան իրավունքներ, որոնցից հնարավոր չէ որևէ շեղում թույլ տալ, և որ արտակարգ իրավիճակների մասին ցանկացած օրենք պետք է ապահովի այդ հանգամանքը: Սահմանադրությունը պետք է նաև նախատեսի, որ արտակարգ դրության ցանկացած հայտարարություն պարունակի այն իրավունքների ցանկը, որոնցից պետք է շեղվել:

69. Ըստ Վենետիկի հանձնաժողովի՝ կարևոր է նաև, որ 36-1 հոդվածը նաև սահմանում է, որ քաղաքացիական իշխանությունները կարող են միջոցներ (վարչական միջոցներ) ձեռնարկել, որպեսզի կանխեն այս վերահաս վտանգը կամ զբաղվեն այս իրադարձություններով միայն «այնքանով, որքանով այն խստորեն անհրաժեշտ է ստեղծված իրավիճակի պայմաններում»:

[CDL-AD\(2016\)006](#), «Ազգի պաշտպանության մասին» Ֆրանսիայի սահմանադրական օրենքի նախագծի վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովի կողմից իր 106-րդ լիազուստ նիստում (Վենետիկ, 2016 թվականի մարտի 11-12) ընդունված կարծիք

95. 200-րդ և 201-րդ հոդվածները սահմանում են արտակարգ դրությունը և պատերազմական դրությունը: Պատերազմական դրության մասին կանոնակարգերը կասկածի տեղիք չեն տալիս: Տվյալ երկրի տարածքում պատերազմական դրությունը, որպես կանոն, հայտարարվում է որպես պատերազմի հետևանք, այսինքն՝ որպես միջազգային մակարդակով գոյություն ունեցող իրավիճակի հետևանք: Արտակարգ դրության հետ կապված իրավիճակն առավել տարբերակված է: Ընդհանուր սահմանադրական օրենքը տարբերակում է արտակարգ դրության տարբեր տեսակներ: Արտակարգ դրությունը կամ ավելի ճիշտ կլինի ասել արտակարգ միջոցները կարող են կիրառվել մի քանի իրավիճակներում՝ 1. պետությանն ուղղված արտաքին սպառնալիքների, տարածքի դեմ զինված ագրեսիայի գործողությունների դեպքում, 2. երբ ագրեսիայի դեմ ընդհանուր պաշտպանության պարտավորություն է առաջանում միջազգային պայմանագրի հիման վրա, 3. պետության սահմանադրական կարգին, քաղաքացիների

անվտանգությանը կամ հասարակական կարգին ուղղված սպառնալիքների առկայության դեպքում, 4. բնական աղետի կամ տեխնոլոգիական խափանման հետևանքները կանխելու կամ հեռացնելու համար՝ ներկայացնելով բնական աղետի նկարագրությունը:

96. 200-րդ հոդվածը սահմանում է, որ արտակարգ դրությունը հայտարարվում է «այն դեպքում, երբ պետության կամ նրա քաղաքացիների գոյատևմանը սպառնում է որևէ հանրային վտանգ»: Մա նման է վերոնշյալ 3-րդ կետում նկարագրված իրավիճակին: Այն պայմանները, որոնց առկայության դեպքում պետք է հայտարարել արտակարգ դրություն, այնուամենայնիվ, նկարագրված են շատ ընդհանուր ձևով: Ինչպես հայտնի է, իրավիճակը նույնն է նաև մյուս սահմանադրությունների դեպքում: Այնուամենայնիվ, նախընտրելի կլիներ առնվազն մեկ այլ որակավորում ավելացնել 200.1-ին հոդվածի վերջում, «եթե սովորական սահմանադրական միջոցներն անբավարար են»:

97. Այս հոդվածը [202] կարգավորում է մարդու և փոքրամասնությունների իրավունքների շեղումներն արտակարգ դրության և պատերազմական դրության պայմաններում: Գերադասելի կլիներ տարբերակում մտցնել պատերազմական և արտակարգ դրությունների միջև՝ կապված հիմնարար իրավունքներից թույլատրվող շեղումների հետ: Երկու դեպքում էլ իրավիճակը տարբեր է, և այդ պատճառով պետք է տարբերակել շեղումների շրջանակը, ինչպես դա նկարագրված է նախորդ սահմանադրական նախագծում: Հետևյալ ընդհանուր ձևակերպումը՝ «թույլատրվում է միայն այնքանով, որքանով այն համարվում է անհրաժեշտ», չափազանց անորոշ է: Պետք է օգտագործվի ավելի խիստ ձևակերպում, ինչպես օրինակ՝ ՄԻԵԿ-ի 15-րդ հոդվածում՝ «այնքանով, որքանով այն խստորեն պահանջվում է ստեղծված իրավիճակի կողմից»:

98. Սույն հոդվածի 4-րդ բաժնում շեղումներ թույլ չտվող իրավունքների ցանկում առկա են նաև որոշ բացեր: 202.2-րդ հոդվածի լույսի ներքո պետք է ներառված լիներ եկեղեցիներին և կրոնական համայնքներին վերաբերող 44-րդ հոդվածը: Կասկածի տեղիք է տալիս նաև այն հանգամանքը, թե ինչու, օրինակ, 33-րդ և 65-րդ հոդվածները ներառված չեն այդ ցանկում:

[CDL-AD\(2007\)004](#). Սերբիայի Սահմանադրության վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովի կողմից իր 70-րդ լիազումար նիստում (Վենետիկ, 2007 թվականի մարտի 16-17) ընդունված կարծիք

33. Արտակարգ իրավիճակների ժամանակ սահմանափակման ենթակա իրավունքների ցանկը չափազանց երկար է: Արտակարգ դրություն կամ ռազմական դրություն հայտարարելու համար պահանջվող պայմանները նախագծում ոչ մի տեղ նշված չեն:

[CDL-AD\(2009\)024](#). Սահմանադրության մեջ փոփոխություններ կատարելու մասին Ուկրաինայի նախագահի կողմից ներկայացված Ուկրաինայի օրենքի նախագծի վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովի կողմից իր 79-րդ լիազումար նիստում (Վենետիկ, 2009 թվականի հունիսի 12-13) ընդունված կարծիք

21. Պետք է ընդգծել, որ, ինչ վերաբերում է այն հանգամանքին, որ արտակարգ դրություն հայտարարելը ենթադրում է մարդու իրավունքներից շեղումներ, (...), արտակարգ դրություն հայտարարելու հետ կապված հանգամանքները պետք է համապատասխանեն նաև «ազգի կյանքին սպառնացող արտակարգ իրավիճակի» պայմանների չափանիշներին, որոնք սահմանված են ՄԻԵԿ-ի 15-րդ հոդվածով և ՔՔԻՄԴ-ի 4-րդ հոդվածով:

[CDL-AD\(2011\)049](#) Հայաստանի արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին օրենքի նախագծի վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովի կողմից իր 89-րդ լիազումար նիստում (Վենետիկ, 2011 թվականի դեկտեմբերի 16-17) ընդունված կարծիք

41. Օրենքի նախագծի 10-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ «արտակարգ դրության պայմաններում սույն Օրենքով նախատեսված միջոցներն ու ժամանակավոր սահմանափակումները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության՝ արտակարգ

CDL-PI(2020)003

իրավիճակներում ստանձնած պարտավորություններից շեղվելու վերաբերյալ միջազգային պարտավորություններին»: Սա նաև շատ ողջունելի դրույթ է: Այնուամենայնիվ, առաջարկվում է, որ հստակորեն վկայակոչվեն այն իրավունքներն ու ազատությունները, որոնցից համապատասխան (...) ՄԻԵԿ-ի 15-րդ հոդվածի և ԲԲԻՄԴ-ի 4-րդ հոդվածի ընդհանրապես չի կարելի շեղվել, ներառվեն (...):

[CDL-AD\(2011\)049](#), Հայաստանի արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին օրենքի նախագծի վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովի կողմից իր 89-րդ լիազուար նիստում (Վենետիկ, 2011 թվականի դեկտեմբերի 16-17) ընդունված կարծիք

44. Արտակարգ դրության հայեցակարգը հիմնված է այն ենթադրության վրա, որ որոշ քաղաքական, ռազմական և տնտեսական արտակարգ իրավիճակների դեպքերում սահմանադրական կառավարության սահմանափակումների համակարգը պետք է իր տեղը զիջի գործադիրի ընդլայնված լիազորությանը: Այնուամենայնիվ, նույնիսկ արտակարգ դրության պայմաններում պետք է գերիշխի իրավունքի գերակայության հիմնարար սկզբունքը: Արտակարգ միջոցները և հիմնարար իրավունքներից շեղումները, սահմանափակումները և կասեցումներն ընդունելի են միայն այն դեպքում, երբ ստեղծված արտակարգ իրավիճակն սպառնալիք է ներկայացնում ազգի կյանքի համար. բացի այդ, նման միջոցները պետք է համաչափ լինեն արտակարգ դրությանը և պետք է տևեն միայն այնքան ժամանակ, որքան տևում է արտակարգ իրավիճակը: Իրավունքի գերակայությունը նաև նշանակում է, որ պետական մարմինները պետք է գործեն օրենքի շրջանակներում, և նրանց գործողությունները ենթակա են վերանայման անկախ դատարանների կողմից: Անհատների իրավական անվտանգությունը պետք է երաշխավորված լինի:

[CDL-AD\(2011\)049](#), Հայաստանի արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին օրենքի նախագծի վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովի կողմից իր 89-րդ լիազուար նիստում (Վենետիկ, 2011 թվականի դեկտեմբերի 16-17) ընդունված կարծիք

34. Իրավունքի գերակայությունը բաղկացած է մի քանի տարրերից, որոնք բոլորն էլ կարևոր նշանակություն ունեն և պետք է պահպանվեն հավասարապես: Այս տարրերն են՝ օրինականության սկզբունքը, իշխանությունների բաժանումը, լիազորությունների բաշխումը, մարդու իրավունքները, պետական ուժի մենաշնորհը, արդարադատության հանրային և անկախ կառավարումը, գաղտնիության պաշտպանությունը, ընտրելու իրավունքը, քաղաքական իշխանությունների մատչելիության ազատությունը, ժողովրդավարական մասնակցությունը հանրային որոշումների կայացման գործում և վերահսկողությունը դրա նկատմամբ, կառավարության թափանցիկությունը, խոսքի, միավորումների և հավաքների ազատությունը, ինչպես նաև քաղաքական որոշումների կայացումը ձայների մեծամասնության սկզբունքով: ...

[CDL-AD\(2006\)015](#), Արտակարգ իրավիճակների ժամանակ մարդու իրավունքների պաշտպանության մասին կարծիք

117. Այնուամենայնիվ, չկա հղում այն իրավունքներից և ազատություններից բացառությունների հնարավորության ու պայմանների վերաբերյալ, որոնք երաշխավորված են II գլխում այնպիսի իրավիճակում, որը հավասար է «ազգի կյանքին սպառնացող արտակարգ իրավիճակի» (տե՛ս ԲԲԻՄԴ-ի 4-րդ հոդվածը):

[CDL-AD\(2013\)032](#), Թունիսի Հանրապետության Սահմանադրության վերջնական նախագծի վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովի կողմից իր 96-րդ լիազուար նիստում (Վենետիկ, 2013 թվականի հոկտեմբերի 11-12) ընդունված կարծիք

95. Այս հոդվածը [53] կարևոր նշանակություն ունի բոլոր հիմնարար իրավունքներն ու ազատություններն արդյունավետորեն կիրառելու համար: Դրա դրույթները պետք է ավելի հստակ ցույց տան, թե որ իրավունքներն ու ազատությունները կարող են սահմանափակվել և պետք է ներառեն չսահմանափակվող իրավունքների ցանկը: Սահմանափակումների

դրույթները պետք է ներդաշնակեցվեն ՄԻԵԿ-ի պահանջներին, այդ թվում՝ արտակարգ իրավիճակների ժամանակ թույլատրելի շեղումների և հիմնարար իրավունքների և ազատությունների կիրառման վրա արտակարգ դրության ունեցած իրավական հետևանքների առնչությամբ:

[CDL-AD\(2014\)010](#), Ռումինիայի Սահմանադրության վերանայման մասին օրենքի նախագծի վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովի կողմից իր 98-րդ լիազումար նիստում (Վենետիկ, 2014 թվականի մարտի 21-22) ընդունված կարծիք

III. Շեղումներ՝ մարդու իրավունքների պարտավորություններից

30. Մարդու իրավունքներին վերաբերող պայմանագրային պարտավորություններից շեղումները սահմանված են Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի (ՄԻԵԿ) 15-րդ հոդվածում և Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրի (ՔՔԻՄԴ) 4-րդ հոդվածում, որոնք շարադրված են շատ համանման տերմիններով. դրանք թույլ են տալիս շեղումներ կատարել այնպիսի արտակարգ իրավիճակների ժամանակ, որոնք սպառնում են ազգի կյանքին: [...]

[CDL-AD\(2016\)037](#), Թուրքիա. 2016 թվականի հուլիսի 15-ի ձախողված հեղաշրջումից հետո ընդունված Արտակարգ դրության մասին N°s 667-676 օրենսդրական որոշումների վերաբերյալ կարծիք՝ ընդունված Վենետիկի հանձնաժողովի կողմից իր 109-րդ լիազումար նիստում 2016 թվականի դեկտեմբերի 9-10-ը

33. Շեղման մեխանիզմը թույլ է տալիս Թուրքիայի իշխանություններին ժամանակավորապես կրճատել մարդու իրավունքներին վերաբերող փաստաթղթերով ստանձնած պայմանագրային պարտավորությունների շրջանակը: Այնուամենայնիվ, ՄԻԵԿ-ի և ՔՔԻՄԴ-ի ներքո շեղման լիազորությունների իրականացման համար կան որոշակի պայմաններ.

- շեղում թույլ տալու իրավունքը կարող է օգտագործվել միայն արտակարգ իրավիճակներում (պատերազմի կամ ազգի կյանքին սպառնացող այլ արտակարգ իրավիճակների ժամանակ),
- Պետությունը, որն օգտվում է շեղում թույլ տալու այս իրավունքից, պետք է համապատասխանի որոշակի ընթացակարգային պայմանների (տե՛ս ՄԻԵԿ-ի 15-րդ հոդվածի 3-րդ մասը, ՔՔԻՄԴ-ի 4-րդ հոդվածի 3-րդ մասը), ինչպիսիք են հայտարարման և ծանուցման պահանջները, ինչպես նաև նրա ազգային օրենսդրությունը,
- պետությունը կարող է ձեռնարկել միջոցներ, որոնք բխում են իր պարտավորություններից «այնքանով, որքանով դա խստորեն անհրաժեշտ է ստեղծված իրավիճակի պայմաններում» ինչպես շրջանակի, այնպես էլ տևողության առնչությամբ, իսկ այս միջոցների անհրաժեշտությունն ու համաչափությունը ենթակա են Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (ՄԻԵԴ) վերահսկողությանը և Մարդու իրավունքների կոմիտեի (ՄԻԿ) մշտադիտարկմանը,
- որոշակի իրավունքներ թույլ չեն տալիս որևէ շեղում,
- շեղումը չի կարող լինել խտրական կամ անհամատեղելի պետության՝ միջազգային օրենսդրությամբ նախատեսված այլ պարտավորությունների նկատմամբ,
- գերակա նպատակը պետք է լինի այնպիսի բնականոն իրավիճակի վերականգնումը, երբ մարդու իրավունքների լիարժեք պահպանումը կրկին կարող է ապահովվել:

[CDL-AD\(2016\)037](#), Թուրքիա. 2016 թվականի հուլիսի 15-ի ձախողված հեղաշրջումից հետո ընդունված Արտակարգ դրության մասին N°s 667-676 օրենսդրական որոշումների վերաբերյալ կարծիք՝ ընդունված Վենետիկի հանձնաժողովի կողմից իր 109-րդ լիազումար նիստում 2016 թվականի դեկտեմբերի 9-10-ը

67. Վենետիկի հանձնաժողովն արդեն նախորդ կարծիքներում նշել էր, որ միջազգային իրավունքի ոլորտում պետություններն ունեն հայեցողական լիազորություններ գնահատելու, թե գոյություն ունի արդյոք արտակարգ իրավիճակ, և արդյոք անհրաժեշտ են շեղումներ: Ազգային իշխանությունները պարտավոր են գնահատել իրավիճակի լրջությունը և հաշվի առնել բոլոր համապատասխան գործոնները, այն դեպքում և այն ժամանակ, երբ առկա է արտակարգ իրավիճակ, որը սպառնում է ազգի գոյությանը, և այն դեպքում, եթե անհրաժեշտ է հայտարարել արտակարգ դրություն դրա դեմ պայքարելու համար: Նույն կերպ, պետական իշխանությունները պարտավոր են որոշում կայացնել արտակարգ իրավիճակները հաղթահարելու համար անհրաժեշտ շեղումների բնույթի և ծավալի վերաբերյալ: Այնուամենայնիվ, չնայած պետություններն այս ոլորտում ունեն լայն հայեցողական լիազորություններ, նրանց լիազորություններն անսահմանափակ չեն, և Մարդու իրավունքների եվրոպական դատարանը որոշակի վերահսկողություն է իրականացնում այդ լիազորությունների նկատմամբ:

[CDL-AD\(2016\)010](#), Թուրքիա. Պարետային ժամերի կառավարման իրավական շրջանակի մասին Վենետիկի հանձնաժողովի կողմից իր 107-րդ լիազումար նիստում (Վենետիկ, 2016 թվականի հունիսի 10-11) ընդունված կարծիք

29. ... պետական անվտանգությանը և հասարակության ապահովությանն ուղղված սպառնալիքների դեմ պայքարի լավագույն միջոցը հիմնականում ոչ թե բոլոր իրավիճակներում գործադիր իշխանություններին ավելի մեծ լիազորություններ տալը և անձնական իրավունքներն ու ազատությունները սահմանափակելն է, այլ ժողովրդավարությունն ու իրավունքի գերակայությունն ամրապնդելն է, որոնք ճշգրտորեն կոչված են պաշտպանելու անհատին իշխանությունների կողմից գործադրվող իր՝ մարդու իրավունքների և ազատությունների կամայական և անհամաչափ սահմանափակումներից:

[CDL-AD\(2006\)015](#), Արտակարգ իրավիճակների ժամանակ մարդու իրավունքների պաշտպանության մասին ընդունված կարծիք

11. Եթե ստեղծվում է արտակարգ իրավիճակ, և Պայմանավորվող պետությունը ցանկանում է օգտագործել շեղումների իր լիազորությունները, ապա սովյալ պետությունը պարտավոր է իրականացնել այնպիսի շեղում, որը պաշտոնապես սահմանված է ՄԻԵԿ-ի 15-րդ հոդվածով՝ նշելով իրավունքները և այն տարածքը, որի նկատմամբ շեղումը կարող է կիրառվել... 15-րդ հոդվածը պահանջում է, որ շահագրգիռ պետությունը Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին ամբողջությամբ տեղեկացնի իր ձեռնարկած միջոցների և դրանց պատճառների մասին...

[CDL-AD\(2006\)015](#), Արտակարգ իրավիճակների ժամանակ մարդու իրավունքների պաշտպանության մասին ընդունված կարծիք

39. ՄԻԵԿ-ի 15-րդ հոդվածի և ՔՔԻՄԴ-ի 1-ին մասի գործողության ոլորտից դուրս՝ մարդու որոշ իրավունքներ և հիմնարար ազատություններ չեն կարող ենթարկվել ենթադրյալ սահմանափակումների: ...

[CDL-AD\(2006\)015](#), Արտակարգ իրավիճակի ժամանակ մարդու իրավունքների պաշտպանության մասին ընդունված կարծիք

Շեղումների [ՔՔԻՄԴ-ի 4-րդ հոդվածի 1-ին մասից] ստեղծությունն ու շրջանակն «այնքան է, որքան որ խստորեն անհրաժեշտ է ստեղծված իրավիճակի պայմաններում»: Դրա անհրաժեշտությունն ու համաչափությունը պետք է ենթարկվեն ներքին և միջազգային վերահսկողության: ...

[CDL-AD\(2006\)015](#), Արտակարգ իրավիճակների ժամանակ մարդու իրավունքների պաշտպանության մասին ընդունված կարծիք

IV. Արտակարգ դրության սահմանադրորեն ամրագրումը

Առաջարկվում է, որ արտակարգ իրավիճակները, որոնք հանգեցնում են արտակարգ դրության հայտարարման, պետք է հստակ սահմանվեն և կարգավորվեն սահմանադրությամբ, և բոլոր դեպքերում պետք է գործի խորհրդարանական մշտադիտարկման մեխանիզմը՝ արտակարգ դրության հայտարարման և երկարաձգման (և դադարեցման) վերաբերյալ: Գրեթե բոլոր սահմանադրությունները պարունակում են դրույթներ խորհրդարանական վերահսկողության մեխանիզմի վերաբերյալ, իսկ որոշ սահմանադրություններում կան նաև օրենսդրական վերահսկողության հատուկ ընթացակարգեր:

[CDL-STD\(1995\)012](#), Արտակարգ լիազորություններ

35. Ազգային անվտանգության և հասարակության ապահովության պաշտպանությունը կարող է արդարացնել մարդու որոշակի իրավունքներից լիարժեք օգտվելու սահմանափակումները և նույնիսկ շեղումներ թույլ տալ մարդու իրավունքների պաշտպանության որոշակի պարտավորություններից: Մարդու իրավունքների և ազատությունների սահմանափակումները և շեղումները, այնուամենայնիվ, պետք է կարգավորվեն օրենքով, և գերադասելի կլինի, որ ունենան Սահմանադրությամբ ամրագրված հիմքեր: Սա ժողովրդավարության և իրավունքի գերակայության պահպանման կենսական երաշխիք է: Օրենքը պետք է նշի, թե որ դեպքերում կարող են սահմանափակումներն արդարացվել, և գերադասելիորեն պետք է սահմանի այն արտակարգ դրությունները, որոնց ժամանակ կարող են արդարացվել շեղումներ թույլ տվող միջոցները ...

[CDL-AD\(2006\)015](#), Արտակարգ իրավիճակների ժամանակ մարդու իրավունքների պաշտպանության մասին ընդունված կարծիք

51. Վենետիկի հանձնաժողովը նշում է, որ արտակարգ իրավիճակները ներառում են ինչպես մարդու իրավունքների սովորական կանոններից շեղումներ, այնպես էլ պետության տարբեր մարմինների միջև պարտականությունների և իրավասությունների բաշխման փոփոխություններ: Հատկապես կարևոր է մարդու հիմնարար իրավունքներից թույլ տրվող շեղումների հարցը. քանի որ փորձը ցույց է տվել, որ մարդու իրավունքների ծանրագույն խախտումները հակված են տեղի ունենալ հենց արտակարգ իրավիճակների համատեքստում: Խորհրդարանական վեհաժողովում նշել են, որ «անվտանգության անհրաժեշտությունը հաճախ մղում է կառավարություններին բացառիկ միջոցներ ձեռնարկել: Սրանք պետք է լինեն իսկապես բացառիկ, քանի որ ոչ մի պետություն իրավունք չունի անտեսել իրավունքի գերակայության սկզբունքը, նույնիսկ ծայրահեղ իրավիճակներում: Բոլոր դեպքերում պետք է գոյություն ունենան կանոնադրական երաշխիքներ, որոնք կանխում են բացառիկ միջոցների չարաշահումը»:

52. Շատ սահմանադրություններ պարունակում են դրույթներ, որոնք հատկապես վերաբերում են արտակարգ դրություններին, իսկ մյուսները՝ ոչ: Դա հատկապես նկատելի է Ավստրիայում, Բելգիայում, Իտալիայում, Դանիայում, Լյուքսեմբուրգում, Նորվեգիայում, Շվեդիայում և Շվեյցարիայում: Որոշ իրավական ռեժիմներ ունեն չգրված սահմանադրական արտակարգ օրենքների ավանդույթ: Վենետիկի հանձնաժողովը, սակայն, հաշվի առնելով, որ սահմանադրությունները սովորաբար պարունակում են հիմնարար իրավունքներն ու ազատությունները պաշտպանելու դրույթներ, արդեն իսկ կարծիք է հայտնել, որ արտակարգ դրությանը վերաբերող դրույթները պետք է սահմանվեն սահմանադրական հստակ կանոնների տեսքով: Համապատասխանաբար, խրախուսվում է ֆրանսիական նախաձեռնությունը, այն է՝ արտակարգ դրությունները սահմանադրականացնելու փորձը:

[CDL-AD\(2016\)006](#), «Ազգի պաշտպանության մասին» Ֆրանսիայի սահմանադրական օրենքի նախագծի

CDL-PI(2020)003

վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովի կողմից իր 106-րդ լիազույստ նիստում (Վենետիկ, 2016 թվականի մարտի 11-12) ընդունված կարծիք

54. Վենետիկի հանձնաժողովն ընդգծում է, որ արտակարգ դրության սահմանադրականացումը պետք է ուղղված լինի արտակարգ դրությունը հայտարարելու կամ այն երկարաձգելու միջոցով հնարավոր չարաշահման դեմ երաշխիքների ամրապնդմանը՝ չունենալով իրական նպատակ պաշտպանել ազգի կյանքը կամ ձեռնարկել ոստիկանական միջոցներ, որոնք ոչ կապված են արտակարգ դրության հետ և ոչ էլ արդարացվում են դրանով: Արտակարգ դրության մասին դրույթները պետք է մեկնաբանվեն համակարգային եղանակով, սահմանադրական մյուս դրույթների, մասնավորապես՝ հիմնարար իրավունքների ու ազատությունների համաձայն: Ոչ մի պարագայում սահմանադրականացումը չպետք է հանգեցնի «չլրացված չեկի»՝ ի օգուտ օրենսդիրի, և անգամ ի օգուտ իշխանության ղեկին կանգնած մեծամասնության, որոնք հակառակ դեպքում իրավասություն կունենային շատ էական շեղումներ մտցնել պաշտպանված ազատություններից, այդ թվում՝ արտակարգ դրություն հայտարարելուց հետո: Այդ պատճառով անհրաժեշտ է կանխել այս ռիսկը՝ սահմանադրությամբ ամրագրելով ոչ միայն որևէ բացառիկ ռեժիմ հայտարարելու (և երկարաձգելու) հնարավորությունը, այդ թվում՝ արտակարգ դրությունը, այլ նաև այն պաշտոնական, նյութական և ժամկետային սահմանափակումները, որոնցով պետք է կարգավորվեն նման ռեժիմները:

[...] 100: Արտակարգ դրության սահմանադրականացումը պետք է ուղղված լինի արտակարգ դրությունը հայտարարելու կամ այն երկարաձգելու միջոցով հնարավոր չարաշահման դեմ երաշխիքների ամրապնդմանը՝ չունենալով իրական նպատակ պաշտպանել Ազգի կյանքը կամ ձեռնարկել ոստիկանական միջոցներ, որոնք բացարձակապես չեն արդարացվում արտակարգ դրությամբ: Ոչ մի պարագայում սահմանադրականացումը չպետք է հանգեցնի օրենսդիր մարմնի անսահմանափակ ազատության, որը հակառակ դեպքում իրավասություն կունենար շատ էական շեղումներ մտցնել պաշտպանված ազատություններից, այդ թվում՝ արտակարգ դրություն հայտարարելուց հետո: Այդ պատճառով անհրաժեշտ է կանխել այս ռիսկը՝ սահմանադրությամբ ամրագրելով ոչ միայն որևէ բացառիկ ռեժիմ հայտարարելու (և երկարաձգելու) հնարավորությունը, այդ թվում՝ արտակարգ դրությունը, այլ նաև այն պաշտոնական, նյութական և ժամկետային սահմանափակումները, որոնցով պետք է կարգավորվեն նման ռեժիմները:

[CDL-AD\(2016\)006](#), «Ազգի պաշտպանության մասին» Ֆրանսիայի սահմանադրական օրենքի նախագծի վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովի կողմից իր 106-րդ լիազույստ նիստում (Վենետիկ, 2016 թվականի մարտի 11-12) ընդունված կարծիք

35. Ազգային անվտանգության և հասարակության ապահովության պաշտպանությունը կարող է արդարացնել մարդու որոշակի իրավունքներից լիարժեք օգտվելու սահմանափակումները և նույնիսկ շեղումներ թույլ տալ մարդու իրավունքների պաշտպանության որոշակի պարտավորություններից: Մարդու իրավունքների և ազատությունների սահմանափակումները և շեղումները, այնուամենայնիվ, պետք է կարգավորվեն օրենքով, և գերադասելի կլինի, որ ունենան սահմանադրությամբ ամրագրված հիմքեր: Մա ժողովրդավարության և իրավունքի գերակայության պահպանման կենսական երաշխիք է: Օրենքը պետք է նշի, թե որ դեպքերում կարող են սահմանափակումներն արդարացվել, և գերադասելիորեն պետք է սահմանի այն արտակարգ դրությունները, որոնց ժամանակ կարող են արդարացվել շեղումներ թույլ տվող միջոցները ...

[CDL-AD\(2006\)015](#), Արտակարգ իրավիճակների ժամանակ մարդու իրավունքների պաշտպանության մասին ընդունված կարծիք

38. Սահմանադրությունն իր առաջարկված փոփոխված ձևով պարունակում է դրույթներ՝ արտակարգ դրություն կամ պատերազմական դրություն հայտարարելու, ինչպես նաև

CDL-PI(2020)003

ռազմական դրություն մտցնելու վերաբերյալ (...): Այս դրույթները, հավանաբար, պատշաճ կերպով ապահովում են ժողովուրդի Բենեզի դիրքորոշումը: Այնուամենայնիվ, արտակարգ դրություն կամ պատերազմական դրություն հայտարարելու կամ ռազմական դրություն մտցնելու իրավական հետևանքները չեն կարգավորվում համակողմանիորեն:

[CDL-AD\(2002\)033](#), Դրզստանի Սահմանադրության բարեփոխումների նախագծի վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովի կողմից իր 53-րդ լիազումար նիստում (Վենետիկ, 2002 թվականի դեկտեմբերի 13-14) ընդունված կարծիք

V. Արտակարգ դրություն հայտարարելը. իրավասությունները

248. Որոշ պետությունների սահմանադրություններ, ինչպիսիք են Դանիան, արտակարգ դրության վերաբերյալ դրույթներ չեն պարունակում: Այնուամենայնիվ, պետությունների մեծ մասն ունի իրավական մեխանիզմներ, որոնք կարգավորում են արտակարգ դրություն հայտարարելը և իրենց սահմանադրության մեջ շեղումների կիրառումը: Ինչ վերաբերում է արտակարգ դրություն հայտարարելու իրավասությանը, ապա երեք ամենատարածված մոտեցումները հետևյալն են՝ [...]

249. Գործադիրը հայտարարում է արտակարգ դրություն առանց խորհրդարանական ներգրավվածության: [...]

250. Գործադիրը հայտարարում է արտակարգ դրություն, բայց այն պետք է վավերացվի Խորհրդարանի կողմից՝ նախքան արտակարգ միջոցներ ձեռնարկելը [...]

251. Խորհրդարանն ինքն է հայտարարում արտակարգ դրություն [...]

[CDL-AD\(2008\)004](#), Զինված ուժերի ժողովրդավարական վերահսկողության մասին Վենետիկի հանձնաժողովի կողմից իր 74-րդ լիազումար նիստում (Վենետիկ, 2008 թվականի մարտի 14-15) ընդունված հաշվետվություն

Արտակարգ դրությունը կարող է կամ չի կարող ներառել պետության մարմինների միջև լիազորությունների բաշխման փոփոխություններ կամ այդպիսի մարմինների իրավասությունների մեջ տեղաշարժեր: Որոշ դեպքերում (օրինակ՝ Իսպանիայում և Պորտուգալիայում) սահմանադրական մարմինների բնականոն գործունեության վրա չի ազդում արտակարգ դրությունը: [...] Մովորաբար, արտակարգ դրություն հայտարարելը ենթադրում է լրացուցիչ լիազորությունների փոխանցում գործադիր մարմին:

[CDL-STD\(1995\)012](#), Արտակարգ լիազորություններ

VI. Վերահսկողություն՝ արտակարգ դրություն հայտարարելու և այն երկարաձգելու նկատմամբ

13. Նույնիսկ իրական արտակարգ իրավիճակների դեպքում պետք է գերիշխի իրավունքի գերակայությունը: ... ներքին վերահսկողական մեխանիզմ պետք է գործի, «որի արդյունքում, հաշվի առնելով իրավիճակին բնորոշ ներքին սահմանափակումները՝ անհատը կարող է ապահովել համապատասխան օրենքների պահպանումը»...

[CDL-AD\(2006\)015](#), Արտակարգ իրավիճակների ժամանակ մարդու իրավունքների պաշտպանության մասին ընդունված կարծիք

12. Շեղումների [ԲԲԻՄԴ-ի 4-րդ հոդվածի 1-ին մասից] տևողությունն ու շրջանակն «այնքան է, որքան որ խստորեն անհրաժեշտ է ստեղծված իրավիճակի պայմաններում»: Դրա անհրաժեշտությունն ու համաչափությունը պետք է ենթարկվեն ներքին և միջազգային վերահսկողության: ...»

[CDL-AD\(2006\)015](#), Արտակարգ իրավիճակների ժամանակ մարդու իրավունքների պաշտպանության մասին ընդունված կարծիք

22. Վենետիկի հանձնաժողովն արտակարգ դրության հետ կապված հիշեցնում է՝ կարևոր է, որ սահմանադրությունը և օրենսդրությունը ապահովեն մեխանիզմներ, մասնավորապես՝ խորհրդարանական և դատական վերահսկողություն գործադիր մարմնի նկատմամբ՝ ազգային իշխանությունների կողմից արտակարգ լիազորությունների չարաշահումը կանխելու նպատակով: Այս հիմնարար սկզբունքը վերահաստատված է Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովի թիվ 713(2005) առաջարկության մեջ, որտեղ նշվում է, որ «ցանկացած ոլորտում բացառիկ միջոցները պետք է վերահսկվեն խորհրդարանների կողմից և չպետք է լուրջ խոչընդոտ հանդիսանան սահմանադրական հիմնարար իրավունքների իրացման համար»:

[CDL-AD\(2011\)049](#), Հայաստանի արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին օրենքի նախագծի վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովի կողմից իր 89-րդ լիազուար նիստում (Վենետիկ, 2011 թվականի դեկտեմբերի 16-17) ընդունված կարծիք

ա. Խորհրդարանական վերահսկողություն

Շատ երկրներում արտակարգ դրություն հայտարարելու իրավունքը բաժանված է օրենսդիր և գործադիր իշխանությունների միջև: Սովորաբար գործադիր մարմինն առաջարկում է, իսկ օրենսդիր մարմինը հաստատում է արտակարգ դրություն հայտարարելը:[...] Որոշ սահմանադրություններ պահանջում են խորհրդարանական մեծամասնություն՝ արտակարգ դրություն հայտարարելու համար: [...]

Արտակարգ իրավիճակների կառավարման մարմինների ձեռնարկած քայլերի և գործողությունների օրենսդրական վերահսկողությունը և այդպիսի վերահսկողության հատուկ ընթացակարգերը կարևոր են իրավունքի գերակայության և ժողովրդավարության իրականացման համար: Ժողովրդավարական սահմանադրությունների մեծ մասում գործադիր մարմինն իրավունք ունի հայտարարելու արտակարգ դրություն, որը ենթակա է խորհրդարանական հաստատման: Այն հարցը, թե ում կողմից, ինչպես և երբ պետք է դադարեցվի արտակարգ դրությունը, նույնպես չի կարող որոշվել գործադիր մարմնի կողմից՝ իր ընդլայնված լիազորություններով հանդերձ: Այդ գործառույթը պետք է իրականացվի Խորհրդարանի կողմից: Սա ենթադրում է խորհրդարանական գործունեության շարունակականություն արտակարգ դրության ժամանակ: Այդ իսկ պատճառով, որոշ սահմանադրություններ հստակ նշում են, որ օրենսդիր մարմինը չի կարող լուծարվել արտակարգ լիազորությունների իրականացման ընթացքում:

[CDL-STD\(1995\)012](#), Արտակարգ լիազորություններ

252. Կարևոր է, որ Խորհրդարանը և դատական համակարգը վերահսկողություն իրականացնեն կառավարության նկատմամբ, որպեսզի խուսափեն չարաշահումներից: Վերահսկողության առաջին հասանելի մեխանիզմը գործադիր մարմնի՝ արտակարգ դրություն հայտարարելու որոշման խորհրդարանական վավերացման ապահովումն է: 197 Որպես կանոն, կառավարությունները պետք է լավ մտածված հիմնավորում ներկայացնեն ինչպես արտակարգ դրություն հայտարարելու իրենց որոշման, այնպես էլ իրավիճակի կարգավորման հատուկ միջոցների վերաբերյալ: Խորհրդարանների մեծ մասը նաև իրավունք ունի կանոնավոր պարբերականությամբ վերանայել արտակարգ դրությունը և անհրաժեշտության դեպքում կասեցնել այն: Ավելին, չափազանց կարևոր են Խորհրդարանի՝ հետագա հաշվետվողականության լիազորությունները, այն է՝ Արտակարգ լիազորությունների կատարման վերաբերյալ հարցումներ և հետաքննություններ անցկացնելու իրավունքը՝ կառավարության վարքագիծը գնահատելու համար:

[CDL-AD\(2008\)004](#), Ձինված ուժերի ժողովրդավարական վերահսկողության մասին Վենետիկի հանձնաժողովի կողմից իր 74-րդ լիազուար նիստում (Վենետիկ, 2008 թվականի մարտի 14-15) ընդունված հաշվետվություն

62. Իշխանությունների կողմից ձեռնարկվող գործողությունների խորհրդարանական վերահսկողությունը և այդպիսի վերահսկողության հատուկ ընթացակարգերն իրավունքի գերակայության և ժողովրդավարության կարևոր երաշխիքներ են: Ժողովրդավարական սահմանադրությունների մեծ մասն արտակարգ դրություն հայտարարելու իրավունքը փոխանցում է գործադիր մարմնին, բայց այն պետք է ստանա խորհրդարանի համաձայնությունը: Այն հարցը, թե ով պետք է դադարեցնի արտակարգ դրությունը, երբ և ինչպես, չի կարելի թողնել միայն գործադիր մարմնի վճռին, որն իրականացնում է ընդլայնված լիազորություններ: Դա Խորհրդարանի գործառույթն է, ինչպես նաև համարվում է արտակարգ դրության ժամանակ խորհրդարանական գործունեության շարունակականության անհրաժեշտություն: Այդ իսկ պատճառով, որոշ սահմանադրություններ հստակ նշում են, որ Խորհրդարանը չի կարող լուծարվել արտակարգ լիազորությունների իրականացման ընթացքում:

[CDL-AD\(2016\)006](#), «Ազգի պաշտպանության մասին» Ֆրանսիայի սահմանադրական օրենքի նախագծի վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովի կողմից իր 106-րդ լիազումար նիստում (Վենետիկ, 2016 թվականի մարտի 11-12) ընդունված կարծիք

23. (...) օրենքի նախագիծը կրկնում է, (...) որ Նախագահը նախքան արտակարգ դրություն հայտարարելը խորհրդակցում է Ազգային ժողովի նախագահի և Վարչապետի հետ, և որ, հայտարարելուց հետո անհապաղ պետք է գումարվի Ազգային ժողովի հատուկ նիստ: Անգլերեն թարգմանության մեջ «խորհրդակցելով» արտահայտությունն ամբողջովին պարզ չէ. այն կարող է նշանակել «համաձայնեցնելով», ինչպես նաև «խորհրդակցելուց հետո»: Եթե բնօրինակ տեքստը ստեղծում է անորոշության նույն մակարդակը, ապա խորհուրդ է տրվում հստակեցնել տեքստը, քանի որ այդ բառերը շատ կարևոր են տվյալ հայտարարության ժողովրդավարական հիմքի համար:[...]

27. Վենետիկի հանձնաժողովը հիշեցնում է, որ գործադիր մարմնի՝ արտակարգ դրություն հայտարարելու որոշման նկատմամբ խորհրդարանական վերահսկողությունը վերահսկողության առաջին հասանելի մեխանիզմն է: Որպես կանոն, կառավարությունները պետք է լավ մտածված հիմնավորում ներկայացնեն ինչպես արտակարգ դրություն հայտարարելու իրենց որոշման, այնպես էլ իրավիճակի կարգավորման հատուկ միջոցների վերաբերյալ: Խորհրդարանների մեծ մասը նաև իրավունք ունի կանոնավոր պարբերականությամբ վերանայել արտակարգ դրությունը և անհրաժեշտության դեպքում կասեցնել այն: Ավելին, չափազանց կարևոր են Խորհրդարանի՝ հետագա հաշվետվողականության լիազորությունները, այն է՝ Արտակարգ լիազորությունների կատարման վերաբերյալ հարցումներ և հետաքննություններ անցկացնելու իրավունքը կառավարության վարքագիծը գնահատելու համար:

[CDL-AD\(2011\)049](#), Հայաստանի արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին օրենքի նախագծի վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովի կողմից իր 89-րդ լիազումար նիստում (Վենետիկ, 2011 թվականի դեկտեմբերի 16-17) ընդունված կարծիք

28. (...) օրենքի նախագիծը սահմանում է, որ Ազգային ժողովը կարող է դադարեցնել արտակարգ դրությունը: Այն նաև սահմանում է, որ Ազգային ժողովը կարող է չեղարկել արտակարգ դրության պայմաններում ձեռնարկված անհատական գործողությունները: Սա ողջունելի է արտակարգ լիազորությունների կիրառման նկատմամբ խորհրդարանական վերահսկողության տեսանկյունից: Քանի որ (...) օրենքի նախագիծը (ինչպես (...) Սահմանադրությունը) սահմանում է, որ արտակարգ դրություն հայտարարելու դեպքում պետք է անհապաղ գումարվի Ազգային ժողովի հատուկ նիստ, պետք է ավելացնել մի դրույթ, համաձայն որի՝ արտակարգ դրություն հայտարարելու կամ այն երկարաձգելու մասին Նախագահի որոշումն անմիջապես ներկայացվում է Ազգային ժողով, որտեղ էլ որոշվում է՝

արդյոք Որոշումը կմնա ուժի մեջ՝ որպես մեկ ամբողջություն, թե կշարունակեն գործել դրա առանձին դրույթները:

[CDL-AD\(2011\)049](#), Հայաստանի արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին օրենքի նախագծի վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովի կողմից իր 89-րդ լիազումար նիստում (Վենետիկ, 2011 թվականի դեկտեմբերի 16-17) ընդունված կարծիք

121. Բազմաթիվ սահմանադրություններ նախատեսում են գործադիր մարմնի՝ արտակարգ իրավիճակներում օրենքներ ընդունելու հնարավորությունը: Խորհրդարանը պետք է ներգրավված լինի այս գործընթացում՝ արտակարգ դրություն հայտարարելը հաստատելու միջոցով և/կամ արտակարգ դրությանը վերաբերող որոշումների նկատմամբ փաստական վերահսկողության կամ արտակարգ դրության ժամանակահատվածի երկարաձգման միջոցով: Ընդդիմության մասնակցությունն այդ հարցերին կարող է ապահովվել՝ պահանջելով ձայների որակյալ մեծամասնություն՝ արտակարգ դրությունը նախապես որոշված ժամանակահատվածից ավել երկարաձգելու համար ([CDL-AD\(2016\)006](#), պրբ. 63): Օգտակար կարող է լինել նաև արտակարգ իրավիճակներում որոշ հատուկ հարցերի մասով գործադիր մարմնի օրենսդրական լիազորությունների սահմանափակումն այնպես, որ գործադիրը չկարողանա իր օրենսդրական գործառույթները ծառայեցնել ընդդիմության իրավունքները ճնշելուն: Վենետիկի հանձնաժողովն ընդգծել է, որ խորհրդարանական գործունեությունը պետք է շարունակվի արտակարգ դրության ժամանակ, և նշել է, որ Խորհրդարանը չպետք է լուծարվի արտակարգ լիազորությունների իրականացման ընթացքում ([CDL-AD\(2016\)006](#), պրբ. 62): Առաջարկվում է արտակարգ իրավիճակների ընթացքում սահմանադրական փոփոխություններ չկատարել ([CDL-AD\(2017\)005](#), պրբ. 29): Այս սահմանափակումները թույլ չեն տալիս գործադիր մարմնին արտակարգ դրությունն օգտագործել որպես ընդդիմության իրավունքները սահմանափակելու պատրվակ:

[CDL-AD\(2019\)015](#), Ժողովրդավարական երկրում Խորհրդարանական մեծամասնության և Ընդդիմության միջև հարաբերությունների բնութագրերը. ստուգացուցակ

93. 103-րդ հոդվածի 2-րդ մասում թվարկված են այն օրենքները, որոնք պետք է ընդունվեն «խորհրդարանականների ընդհանուր թվի առնվազն երեք հինգերորդ ձայների ապահովմամբ»: Ռազմական դրության և արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին օրենքները պետք է ավելացվեն այս ցուցակում, հատկապես, եթե ենթադրվում է, որ այդ օրենքներն ընդհանուր բնույթ են կրում: [...]:

[CDL-AD\(2015\)037](#), Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (Գլուխներ 1-7 և 10) փոփոխությունների նախագծի վերաբերյալ առաջին կարծիք՝ հաստատված Վենետիկի հանձնաժողովի կողմից իր 104-րդ լիազումար նիստում (Վենետիկ, 2015 թվականի հոկտեմբերի 23- 24)

81. Հանձնաժողովը լիովին հասկանում է, որ գործնականում այդպիսի կարևոր որոշումը [վերաբերվում է պարետային ժամերին] չի կարող ընդունվել կառավարչի կողմից միակողմանիորեն: Ինչպես հաստատել են իշխանությունները, կառավարիչները (որպես պետության տեղական ներկայացուցիչներ) նախքան այդպիսի որոշում կայացնելը խորհրդակցում են Ներքին գործերի նախարարության և կառավարության այլ մարմինների (մասնավորապես՝ անվտանգության վարչության) հետ: Նրանց քննարկումները, անկասկած, ընդգրկում են պարետային ժամի միջոցառումների անհրաժեշտությունը, դրանց ծավալը (այդ թվում՝ աշխարհագրական տարածքը և ժամանակը) և դրանց կիրառման համար անհրաժեշտ միջոցները: Իշխանությունները դա համարում են որպես նախաձեռնությունը ենթականերին փոխանցելու և համաչափության սկզբունքների կիրառում, որոնք ակնհայտորեն շատ կարևոր են բացառիկ միջոցառումների դեպքում: Հանձնաժողովի կարծիքով, այնուամենայնիվ, դրանք մեկուսացված քննարկումներ են, որոնք չեն կարող փոխարինել օրենքով նախատեսված կիրարկման ընդհանուր պայմաններին կամ չեն կարող համարժեք լինել խորհրդարանի կողմից

բացառիկ միջոցառումների նկատմամբ իրականացվող վերահսկողությանը, ինչը հնարավորություն է տալիս հատկապես խորհրդարանական քննարկումներ անցկացնել գործադիր մարմնի կողմից նախապես որոշված ցանկացած նման միջոցառման վերաբերյալ՝ նախքան դրանց հաստատումը:

[CDL-AD\(2016\)010](#) Թուրքիա. Պարետային ժամերի կառավարման իրավական շրջանակի մասին Վենետիկի հանձնաժողովի կողմից իր 107-րդ լիազուսմար նիստում (Վենետիկ, 2016 թվականի հունիսի 10-11) ընդունված կարծիք

53. (...) Թուրքիայի Սահմանադրությունն արտակարգ դրության մասին օրենսդրական որոշումները թողնում է Ազգային մեծ ժողովի փաստական վերահսկողության ներքո: Նման վերահսկողությունը պետք է լինի արդյունավետ. արտակարգ դրության մասին օրենսդրական որոշումների ընդունման և խորհրդարանի կողմից դրանց քննության միջև երկարատև հետաձգումը նշանակում է, որ այդպիսի միջոցառումներն այդ ժամանակ իրականացվել են միակողմանիորեն՝ առանց այդպիսի խորհրդարանական վերահսկողության: Բացի այդ, տվյալ դեպքում արտակարգ դրության մասին օրենսդրական որոշումների ժամանակին հսկողության բացակայությունն առավելագույնս խնդրահարույց է, քանի որ քննվող ժամանակահատվածում չի իրականացվել որոշումների վերաբերյալ օրենքների դատական քննություն, իսկ Սահմանադրական դատարանը կարող է վերանայել արտակարգ դրության մասին օրենքները վերացական կարգով (in abstracto) միայն այն բանից հետո, երբ դրանք հաստատված լինեն օրենքով (...)

[CDL-AD\(2016\)037](#) Թուրքիա. 2016 թվականի հուլիսի 15-ի ձախողված հեղաշրջումից հետո ընդունված Արտակարգ դրության մասին N°s 667-676 օրենսդրական որոշումների վերաբերյալ կարծիք՝ ընդունված Վենետիկի հանձնաժողովի կողմից իր 109-րդ լիազուսմար նիստում 2016 թվականի դեկտեմբերի 9-10-ը

191. (...) Սահմանադրական այն իրավիճակը, որն առաջացել է արտակարգ դրություն հայտարարելուց հետո, Վենետիկի հանձնաժողովի մտահոգության առանցքն է կազմում: Հայտարարությունն ինքնին չի սահմանում Կառավարության արտակարգ լիազորությունների շրջանակը: Նույն կերպ, Խորհրդարանը, հայտարարությունը հաստատելիս, ոչ մի կերպ չի սահմանափակել Կառավարության մանդատը: Սահմանադրությունը պարունակում է որոշակի ընդհանուր սկզբունքներ, որոնք չպետք է խախտվեն նույնիսկ արտակարգ իրավիճակների ժամանակ, բայց քանի որ Խորհրդարանն ընդհանուր ցուցումներ չի տվել Կառավարությանը և չի կատարել իր վերահսկողական գործառնությունները հատուկ օրենսդրական որոշումների նկատմամբ մինչև հոկտեմբեր, Կառավարությունն այդ ժամանակահատվածում ունեցել է անսահմանափակ իշխանություն երկիրը ղեկավարելու համար՝ առանց հակակշիռների և զսպումների որևէ մեխանիզմի՝ փոխարենն առաջնորդվելով իր սեփական բարի կամքով: Այս իրավիճակը վտանգավոր է ժողովրդավարական իրավակարգի համար՝ հատկապես հաշվի առնելով Կառավարության կողմից ձեռնարկված միջոցառումների գրեթե անշրջելի բնույթը:

[CDL-AD\(2016\)037](#) Թուրքիա. 2016 թվականի հուլիսի 15-ի ձախողված հեղաշրջումից հետո ընդունված Արտակարգ դրության մասին N°s 667-676 օրենսդրական որոշումների վերաբերյալ կարծիք՝ ընդունված Վենետիկի հանձնաժողովի կողմից իր 109-րդ լիազուսմար նիստում 2016 թվականի դեկտեմբերի 9-10-ը

72. Հոդված 118 No. 5-ում բաց են մնում որոշ հարցեր: Պարզ չէ, թե ինչ է տեղի ունենում, եթե Սենատը չի հաստատում որոշումները: Ձինված ուժերի կիրառումը հնարավոր է անգամ առանց սահմանադրական մեկ այլ մարմնի հաստատման: Այս համատեքստում պետք է հիշեցնել Վենետիկի հանձնաժողովի նախորդ մեկնաբանությունը. «Ոչ մի առարկություն չկա պատերազմական և արտակարգ իրավիճակներում Նախագահի դերը որպես գերակշռող սահմանելու համար: Այնուամենայնիվ, 6-րդ կետում նշված դերերի բաժանումն այնքան էլ պարզ չէ: Գերագույն ռադան (խորհուրդը) պետք է հաստատի ռազմական դրություն կամ արտակարգ դրություն մտցնելու մասին որոշումները: Բայց չի բացատրվում, թե ինչպիսին

կլինեն հետևանքները, եթե Գերագույն ռադան հրաժարվի հաստատել դրանք: Կարծես նպատակահարմար է Նախագահին շնորհել միայն «առաջին արձագանքի» լիազորություն և հստակեցնել, որ այդպիսի որոշումը կորցնում է իր վավերականությունը, եթե այն չի հաստատվում Գերագույն ռադայի կողմից: Ըստ դրույթի ձևակերպման՝ ռազմական ագրեսիայի դեպքում զինված ուժերի օգտագործման որոշումը չպետք է հաստատվի Գերագույն ռադայի կողմից: Առաջարկվում է խորհրդարանին փոխանցել հաստատման իրավունք նաև այս ոլորտում»:

73. Ո՛չ 118-րդ հոդվածի 5-րդ կետը, ո՛չ էլ 100-րդ հոդվածի 7-րդ կետը, որոնք Սենատին տալիս են Նախագահի հայտարարությունը հաստատելու իրավունք, չեն պարունակում որևէ դրույթ այն իրավիճակների մասին, որոնց դեպքում կարող է հայտարարվել ռազմական դրություն կամ արտակարգ դրություն: 68-րդ հոդվածի 2-րդ կետը, իր հերթին, նախատեսում է ռազմական դրության կամ արտակարգ դրության պայմաններում թվարկված հիմնարար իրավունքները սահմանափակելու հնարավորությունը: Հետևաբար, առաջարկվում է տեքստում ներառել այդպիսի դրույթ:

CDL-AD(2009)024, Վենետիկի հանձնաժողովի կողմից իր 79-րդ լիազումար նիստում ընդունված կարծիք (Վենետիկ, 2009 թվականի հունիսի 12-13)՝ Սահմանադրության մեջ փոփոխություններ կատարելու մասին Ուկրաինայի նախագահի կողմից ներկայացված Ուկրաինայի օրենքի նախագծի վերաբերյալ

30. Նախագահը դեռևս իրավունք ունի անհապաղ արձագանքել արտակարգ իրավիճակների և պատերազմի դեպքում: Բայց բոլոր այդ դեպքերում անհրաժեշտ է «անհապաղ ծանուցում ուղարկել Ժողովու Քենեշին», որն իրավունք ունի հաստատել կամ չեղյալ համարել Նախագահի ընդունած որոշումները (Հոդված 74):

31. Այս բոլոր փոփոխությունները շատ դրական են, քանի որ դրանք զգալիորեն կրճատում են այն ծայրահեղ լիազորությունները, որոնք Նախագահն ունեցել է՝ համաձայն 2007 թվականի Սահմանադրության: Այժմ Նախագահին տրված լիազորությունների շրջանակը դեռևս բավականաչափ մեծ է՝ երկրում կայունության ապահովման համար՝ հատկապես հաշվի առնելով արտակարգ իրավիճակներին անհապաղ արձագանքելու հնարավորությունները:

[...] 46. Ժողովու Քենեշի իրավասությունների վերաբերյալ գլխի փոփոխությունները ներկայացված են՝ ի լրումն Նախագահի լիազորությունների փոփոխությունների, և ակնհայտորեն ցույց են տալիս, որ նորաստեղծ համակարգը խորհրդարանական է: [...]: Ինչպես արդեն նշվեց վերևում, Ժողովու Քենեշը նաև իրավունք ունի արտակարգ իրավիճակների և պատերազմի ժամանակ հաստատել կամ չեղյալ հայտարարել Նախագահի ընդունած որոշումները:

CDL-AD(2010)015, Վենետիկի հանձնաժողովի կողմից իր 83-րդ լիազումար նիստում Դրզական Հանրապետության Սահմանադրության նախագծի (2010 թվականի մայիսի 21-ին հրապարակված տարբերակ) վերաբերյալ ընդունված կարծիք (Վենետիկ, 2010 թվականի հունիսի 4)

116. Նախագահը նաև իրավունք ունի բացառիկ միջոցներ ձեռնարկել «անհապաղ վտանգի դեպքում, որը սպառնում է ազգի ինստիտուտներին, անվտանգությանը կամ անկախությանը և խոչընդոտում է պետական մարմինների պատշաճ գործունեությունը» (Հոդված 79): Այս դրույթը, կարծես, հիմնված է Ֆրանսիայի Սահմանադրության 16-րդ հոդվածի վրա: Այնուամենայնիվ, այս բացառիկ լիազորությունները, կարծես, բավականին սահմանափակված են տեքստով, քաղաքական տեսանկյունից՝ Վեհաժողովի գործողության միջոցով, իսկ իրավական տեսանկյունից՝ Սահմանադրական դատարանի միջամտությամբ: Այս դրույթը պետք է համարել ողջունելի:

CDL-AD(2013)032, Վենետիկի հանձնաժողովի կողմից իր 96-րդ լիազումար նիստում Թունիսի Հանրապետության սահմանադրական վերջնական նախագծի վերաբերյալ ընդունված կարծիք (Վենետիկ, 2013

CDL-PI(2020)003

թվականի հոկտեմբերի 11-12)

114. 119-րդ հոդվածը սահմանում է ռազմական դրություն հայտարարելու հիմքերը և ընթացակարգը, ինչպես նաև Զինված ուժերի օգտագործման պայմանները: Ընթացակարգը մանրամասն նկարագրված է՝ հնարավորություն տալով Կառավարությանը կամ Վարչապետին կայացնել նպատակահարմար որոշումներ և ներառում է Խորհրդարանի կողմից միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ հաջորդական հաստատումը: Այնուամենայնիվ, դա չի նախատեսում Ազգային ժողովի կողմից փաստական վերահսկողություն ռազմական դրության կամ արտակարգ դրության պայմաններում ձեռնարկված միջոցների նկատմամբ: Այս թերությունը պետք է շտկել:

[...] 116. Արտակարգ դրության մասին 120-րդ հոդվածում, կարծես, առկա է նույն թերությունը, ինչպես և նախորդ հոդվածում: 2-րդ մասում ասվում է. «Արտակարգ դրություն հայտարարելու դեպքում անհապաղ պետք է գումարվի Ազգային ժողովի հատուկ նիստ՝ օրենքի ուժով: Ազգային ժողովը կարող է դադարեցնել արտակարգ դրությունը կամ չեղյալ հայտարարել միջոցառումների իրականացումը՝ խորհրդարանականների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ»: Ազգային ժողովի այս անհապաղ խորհրդակցությունը ողջունելի է, սակայն Վեհաժողովի՝ արտակարգ դրության ժամանակ ձեռնարկված միջոցները վերահսկելու լիազորությունները պետք է հնարավոր լինեն ավելի ուշ փուլում:

[CDL-AD\(2015\)037](#), Հայաստանի Հանրապետության Մահմանադրության (Գլուխներ 1-7 և 10) փոփոխությունների նախագծի վերաբերյալ առաջին կարծիք՝ հաստատված Վենետիկի հանձնաժողովի կողմից իր 104-րդ լիազումար նիստում (Վենետիկ, 2015 թվականի հոկտեմբերի 23- 24)

բ. Դատական վերահսկողություն

Արտակարգ դրության հայեցակարգը հիմնված է այն ենթադրության վրա, որ որոշ քաղաքական, ռազմական և տնտեսական արտակարգ իրավիճակներում սահմանադրական կառավարության սահմանափակումների համակարգը պետք է իր տեղը գիջի գործադիրի ընդլայնված լիազորությանը (այդ թվում ռազմական լիազորությանը ռազմական դրության ժամանակ): Այնուամենայնիվ, արտակարգ դրությունը իրավական ռեժիմ է, որը ղեկավարվում է կառավարման օրինականության սկզբունքներով՝ իրավունքի գերակայության հիման վրա: Իրավունքի գերակայությունն այն համակարգն է, որտեղ պետական մարմինները պետք է գործեն օրենքի շրջանակներում, և նրանց գործողությունները ենթակա են վերանայման անկախ դատարանների կողմից: Այլ կերպ ասած՝ անհատների իրավական անվտանգությունը պետք է երաշխավորված լինի:

[CDL-STD\(1995\)012](#), Արտակարգ լիազորություններ

Ներպետական դատարանները պետք է ունենան սահմանափակման և շեղման միջոցները վերանայելու լիակատար իրավասություն՝ իրենց օրինականության և արդարացիության և ՄԻԵԴ համապատասխան դրությոններին համապատասխանության տեսանկյունից:

[CDL-AD\(2006\)015](#), Արտակարգ իրավիճակներում մարդու իրավունքների պաշտպանության վերաբերյալ կարծիք, պրբ. 36

253. Խորհրդարանի հետ մեկտեղ դատական համակարգը առանցքային դեր է խաղում՝ արտակարգ դրությունների ժամանակ գործադիրի իրավասությունների վերահսկման գործում՝ որոշումներ կայացնելով արտակարգ դրություն հայտարարելու օրինականության, ինչպես նաև կոնկրետ արտակարգ միջոցների օրինականության վերանայման մասին: Ավելին, դատական համակարգը պետք է շարունակի ապահովել արդար դատաքննության իրավունքը: Այն նաև պետք է անհատներին տրամադրի արդյունավետ օգնություն պետական պաշտոնյաների կողմից

իրենց մարդու իրավունքների խախտման դեպքում: Չսահմանափակվող իրավունքների խախտումից խուսափելու համար արտակարգ միջոցների օրինականության հետ կապված հարցերով դատարանում վարույթ հարուցելու իրավունքը պետք է պաշտպանված լինի դատական համակարգի անկախության միջոցով:

[CDL-D\(2008\)004](#), Զինված ուժերի ժողովրդավարական վերահսկողության վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովի (Վենետիկ, 2008 թվականի մարտի 14-15) կողմից իր 74-րդ լիազումար նիստում ընդունված գեկույց

185. (...) Վենետիկի հանձնաժողովը համաձայն է, որ «քանի որ խորհրդարանական ժողովրդավարությունում գործադիրը սովորաբար կազմված է կուսակցության ղեկավարներից և այլ իշխող կուսակցության գործիչներից, [...] օրենսդրական վերահսկողությունը կարող է գործնականում բավարար արդյունավետ չլինել գործադիր իշխանության չարաշահումը վերահսկելու համար: Այդ պատճառով իրավունքի գերակայության վրա հիմնված պետությունում օրենսդրական վերահսկողությունը պետք է լրացվի դատական վերահսկողության համապատասխան և արդյունավետ միջոցներով:

[CDL-AD\(2016\)037](#), Թուրքիա. 2016 թվականի հուլիսի 15-ի ձևավորված հեղաշրջումից հետո ընդունված Արտակարգ դրության մասին N°s 667-676 օրենսդրական որոշումների վերաբերյալ կարծիք՝ ընդունված Վենետիկի հանձնաժողովի կողմից իր 109-րդ լիազումար նիստում 2016 թվականի դեկտեմբերի 9-10-ը

Հոդված 13, որը կարգավորում է պարետային ժամի կանոնները խախտող անձանց ձերբակալելու կարգը, ներառում է մի դրույթ, որով սահմանվում է, որ «Ֆիզիկական անձը կարող է բողոքարկել ձերբակալման մասին որոշումը ավելի բարձր աստիճաններում կամ դատական կարգով»: Հասկանալի է, որ պետք է, երբ վտանգի տակ է առանց դատաքնության երկարատև չպահվելու (հաբեաս կորպուսի) իրավունքը, իսկ ավելի ընդհանրական առումով պետք է երաշխավորված լինի նաև դատարանի մատչելիության իրավունքը: Այդ նպատակով առաջարկվում է ընդհանուր դրույթ ներառել (...): Այս առումով Վենետիկի հանձնաժողովը հիշեցնում է, որ «Խորհրդարանի հետ մեկտեղ դատական համակարգը առանցքային դեր է խաղում արտակարգ դրությունների ժամանակ գործադիրի իրավասությունների վերահսկման գործում՝ որոշումներ կայացնելով արտակարգ դրություն հայտարարելու օրինականության, ինչպես նաև կոնկրետ արտակարգ միջոցների օրինականության վերանայման մասին: Ավելին, դատական համակարգը պետք է շարունակի ապահովել արդար դատաքնության իրավունքը: Այն նաև պետք է անհատներին տրամադրի արդյունավետ օգնություն պետական պաշտոնյաների կողմից իրենց մարդու իրավունքների խախտման դեպքում: Չսահմանափակվող իրավունքների խախտումից խուսափելու համար արտակարգ միջոցների օրինականության հետ կապված հարցերով դատարանում վարույթ հարուցելու իրավունքը պետք է պաշտպանված լինի դատական համակարգի անկախության միջոցով:

[CDL-AD\(2011\)049](#), Հայաստանի արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին օրենքի նախագծի վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովի կողմից իր 89-րդ լիազումար նիստում (Վենետիկ, 2011 թվականի դեկտեմբերի 16-17) ընդունված կարծիք, պրբ. 41

Այս տեղեկությունների լույսի ներքո պարզ չէ, թե արդյոք պարետային ժամի միջոցների կիրառման համար նախատեսված որոշումը կարող է ենթակա լինել վերանայման օրինականության մասով: Հանձնաժողովն անդրադառնում է իր կողմից «Ազգի պաշտպանության մասին» Ֆրանսիայի սահմանադրական օրենքի նախագծի վերաբերյալ կարծիքում արված մեկնաբանություններին՝ որպես արտակարգ դրության ժամանակ իշխանությունների կողմից ձեռնարկված շեղող միջոցառումների և ընդունված որոշումների դատական վերահսկողության առաջնային կարևորությանը: Այն Թուրքիայի իշխանություններին առաջարկում է ստեղծել համապատասխան համակարգ՝ արտակարգ

դրությունների ժամանակ իշխանությունների կողմից ձեռնարկված բոլոր միջոցների օրինականության, այդ թվում՝ անհրաժեշտության և համաչափության արդյունավետ վերանայումը հնարավոր դարձնելու համար:

[CDL-AD\(2016\)010](#), Թուրքիա. Պարետային ժամերի կառավարման իրավական շրջանակի վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովի կողմից իր 107-րդ լիազուար նիստում (Վենետիկ, 2016 թվականի հունիսի 10-11) ընդունված կարծիք, պրբ. 49

Մարդու իրավունքների և արտակարգ դրության հարցի մասին իր գեկույցի մեջ (1997) ՄԱԿ-ի Հատուկ գեկուցողը անում է հետևյալ առաջարկությունները (համաչափության սկզբունքի մասով, շեղագիր բառերն ավելացված են). «Երբ արտակարգ դրությունը ազդում է մարդու՝ շեղման ենթակա որոշ իրավունքների իրացման վրա, հնարավորության սահմաններում պետք է ընդունվեն վարչական կամ դատական միջոցներ, որոնք նպատակաուղղված պետք է լինեն սույնով նշված իրավունքների իրացման շրջանակներում առաջացած անբարենպաստ հետևանքների մեղմացմանը կամ վերացմանը»:

Այլ իրավասություններից բերված օրինակներով հաստատվում է, որ որոշ դատավարական իրավունքներ կարող են դիտվել որպես անվերապահորեն չսահմանափակվող: Ուստի, Մարդու իրավունքների մասին ամերիկյան կոնվենցիան բացահայտորեն արգելում է «նման իրավունքների պաշտպանության համար առանցքային հանդիսացող դատական երաշխիքների» կասեցումը, որոնք շեղման ենթակա չեն (ՄԻԱԿ հոդված 27, պրբ. 2): «Արտակարգ դրությունների ժամանակ առանց դատաքննության երկարատև չպահվելու (հաբեաս կորպուսի) իրավունքի»¹⁰⁶ մասին իր խորհրդատվական եզրակացության մեջ Մարդու իրավունքների միջամերիկյան դատարանը նահանգներին խորհուրդ է տվել չկասեցնել դատական պաշտպանության իրավունքները՝ կալանքի օրինականությունը (ՄԻԱԿ հոդված 7, պրբ. 6) և դատական պաշտպանության իրավունքը (ՄԻԱԿ հոդված 25, պրբ. 1) ստուգելու համար:

[CDL-AD\(2016\)037](#), Թուրքիա. 2016 թվականի հուլիսի 15-ի ձախողված հեղաշրջումից հետո ընդունված Արտակարգ դրության մասին N° 667-676 օրենսդրական որոշումների վերաբերյալ կարծիք՝ ընդունված Վենետիկի հանձնաժողովի կողմից իր 109-րդ լիազուար նիստում 2016 թվականի դեկտեմբերի 9-10-ը, պրբ. 159 և 160

Վենետիկի հանձնաժողովը որևէ պատճառ չի տեսնում կասկածելու, որ Ֆրանսիայի վարչական դատավորի կողմից, հիմնականում ժամանակավոր միջոցներով (*référés*), արտակարգ միջոցների նկատմամբ իրականացվող վերահսկողությունը պաշտպանության արդյունավետ միջոց է: Այն կարծում է, որ Հոդված 36-1-ում լրացում կատարելը, համաձայն որի՝ քաղաքացիական իշխանությունների կողմից կարող են ձեռնարկվել միայն խիստ անհրաժեշտ միջոցները, իրենից կներկայացնի հավելյալ երաշխիք:

[CDL-AD\(2016\)006](#), «Ազգի պաշտպանության մասին» Ֆրանսիայի սահմանադրական օրենքի նախագծի վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովի կողմից իր 106-րդ (Վենետիկ, 2016 թվականի մարտի 11-12) լիազուար նիստում ընդունված կարծիք, պրբ. 74

86. Բացի այդ, 23-րդ գլխի համաձայն Օրենքը կարող է նախատեսել հիմնական օրենքներից և ազատություններից միայն ժամանակավոր բացառություններ, որոնք համատեղելի են Ֆինլանդիայի միջազգային պարտավորությունների հետ, եթե համարվում է, որ դրանք անհրաժեշտ են զինված հարձակման դեպքում կամ եթե Օրենքով հայտարարվում է, որ արտակարգ դրությունն այնքան լուրջ է, որ այն կարող է համեմատվել զինված հարձակման հետ: Թվում է նաև, որ այս դրույթը մարդու իրավունքների ոլորտում ենթադրում է դաշնագրերի գերակայությունն ազգային (կանոնավոր) օրենսդրության նկատմամբ:

87. Դրա հետևանքով Ֆինլանդիայի դատական իշխանությունները կարող են դատական վերանայում իրականացնել հիմնական իրավունքների և ազատությունների ոլորտում

միջազգային պարտավորություններին համապատասխանությունն ապահովելու տեսանկյունից:

[CDL-AD\(2016\)010](#), Ֆինլանդիայի Սահմանադրության վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովի կողմից իր 74-րդ լիազուսմար նիստում (Վենետիկ, 2008 թվականի մարտի 14-15) ընդունված կարծիք

115. Ողջամիտ կլինի Նախագահին բացահայտորեն վերապահել Ռազմական դրության ժամանակ ընդունված օրենքները Սահմանադրական դատարան ներկայացնելու իրավունքը:

[...] 118. Ի վերջո, ողջամիտ կլինի Նախագահին բացահայտորեն վերապահել Արտակարգ դրության ժամանակ ընդունված օրենքները Սահմանադրական դատարան ներկայացնելու իրավունքը:

[CDL-AD\(2015\)037](#), Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (Գլուխներ 1-7 և 10) փոփոխությունների նախագծի վերաբերյալ առաջին կարծիք՝ հաստատված Վենետիկի հանձնաժողովի կողմից իր 104-րդ լիազուսմար նիստում (Վենետիկ, 2015 թվականի հոկտեմբերի 23- 24)

VII. Արտակարգ դրության տևողությունը

Շատ սահմանադրություններ ժամկետային սահմանափակումներ են նախատեսում արտակարգ դրության համար: [...] Սովորաբար այս ժամկետները վերականգնելի են:

[CDL-STD\(1995\)012](#), Արտակարգ լիազորություններ

Արտակարգ դրությունը սահմանվում է որպես բացառիկ և ժամանակավոր դրություն: Այնպես որ այն պետք է լինի նաև ժամանակավոր: Արտակարգ դրության ժամկետը պետք է լինի սահմանափակ: Այն պետք է տևի ոչ ավելին, քան ինքը իրավիճակը և չի կարող դառնալ մշտական:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նման Վենետիկի հանձնաժողովը շեշտում է, որ արտակարգ դրությունը կարող է երկարաձգվել միայն «շարունակական ազդեցության գործընթացի [...]» հիմքով «որը պահանջում է արտակարգ միջոցների անհրաժեշտության մշտական վերանայում»: Կառավարությունը պետք է որոշի, թե արդյոք պետք է երկարաձգել արտակարգ դրությունը՝ ամբողջությամբ իմանալով այն փաստերը, որոնք կարող են երաշխավորել այն: Վենետիկի հանձնաժողովը նշում է, որ արտակարգ դրությունը երկարաձգելու մասին երկրորդ օրենքի վերաբերյալ իր պարտադիր կարծիքում Ֆրանսիայի պետական խորհուրդը նշում է, որ «արտակարգ դրությունը պետք է մնա ժամանակավոր: [...] Բացառիկ լիազորություններն ունեն հետևանքներ, որոնք իրավունքի գերակայությամբ ղեկավարվող պետությունում պետք է անպայման ունենան ժամանակային և տարածական սահմանափակումներ: [...] Արտակարգ դրությունը մնում է «ճգնաժամային դրություն», որն իր բնույթով ժամանակավոր է: Հետևաբար այն չի կարող անժամկետ երկարաձգվել: [...] Երբ, նման դեպքում արտակարգ դրություն առաջացնող «վերահաս վտանգը» հիմնված է մշտական սպառնալիքի վրա, մենք պետք է դիմակայենք դրանց մշտական փաստաթղթերի կիրառմամբ: Հետևաբար, Կառավարությունը պետք է սկսի պատրաստվել արտակարգ դրության դադարեցմանը»: Հետևաբար, Վենետիկի հանձնաժողովը համարում է, որ չնայած արտակարգ դրության՝ ժամանակային սահմանափակում ունենալու մասին կոնկրետ դրույթի բացակայությանը՝ այս սկզբունքն ամրագրված է Պետական Խորհրդի նախադեպային իրավունքում: Բացի այդ, Վենետիկի հանձնաժողովն առաջարկում է մտածել արտակարգ դրության երկրորդ երկարաձգումը խորհրդարանի որակյալ մեծամասնությամբ ապահովելու հնարավորության մասին:

[CDL-AD\(2016\)006](#), «Ազգի պաշտպանության մասին» Ֆրանսիայի սահմանադրական օրենքի նախագծի վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովի կողմից իր 106-րդ լիազուսմար նիստում (Վենետիկ, 2016 թվականի մարտի 11-12) ընդունված կարծիք, պրբ. 65 և 67

[...] Վենետիկի հանձնաժողովը հիշեցնում է, որ արտակարգ դրության հիմնական նպատակը ժողովրդավարական իրավական կարգի վերականգնումն է: Արտակարգ դրության ռեժիմը չպետք է անհարկի երկարաձգվի. եթե Կառավարությունը չափազանց երկար է դեկավարում արտակարգ դրությունում սահմանված լիազորություններով, այն անխուսափելիորեն կկորցնի ժողովրդավարական լեգիտիմությունը: Ավելին, արտակարգ դրության ընթացքում չսահմանափակվող իրավունքները չեն կարող սահմանափակվել, և իրավունքների համար սահմանվող ցանկացած այլ սահմանափակում պետք է խիստ անհրաժեշտ լինի նշված արտակարգ դրության պահանջների լույսի ներքո:

[CDL-AD\(2016\)037](#), Թուրքիա. 2016 թվականի հուլիսի 15-ի ձևափակված հեղաշրջումից հետո ընդունված Արտակարգ դրության մասին N°s 667-676 օրենսդրական որոշումների վերաբերյալ կարծիք՝ ընդունված Վենետիկի հանձնաժողովի կողմից իր 109-րդ լիազումար նիստում 2016 թվականի դեկտեմբերի 9-10-ը, պրբ. 229

Հոդված 133 (Արտակարգ դրություն հայտարարելը)

Սույն հոդվածի վերջին պարբերության համաձայն՝ արտակարգ դրությունը պետք է տևի մինչև դրա պատճառը հանդիսացող հանգամանքների վերացումը: Լուծված չէ այն հարցը, թե որ մարմինը և որ կարգով է սահմանում, թե արդյոք այս հանգամանքները շարունակում են իրենց ազդեցությունը, թե՛ ոչ:

[CDL-AD\(2007\)047](#), Չեռնոգորիայի Սահմանադրության վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովի կողմից իր 73-րդ լիազումար նիստում (Վենետիկ, 2007 թվականի դեկտեմբերի 14-15) ընդունված կարծիք, պրբ. 102

Օրենքի նախագծի 14-րդ հոդվածը հստակ սահմանում է արտակարգ դրության ժամանակ միջոցներ ձեռնարկող իշխանությունների՝ դրանք արտակարգ դրության ավարտից անմիջապես հետո վերացնելու պարտականությունը: Դրույթում պետք է նշվի, որ «համապատասխան գործողությունները» պետք է ձեռնարկվեն անհապաղ:

[CDL-AD\(2011\)049](#), Հայաստանի արտակարգ դրության իրավական ռեժիմի վերաբերյալ օրենքի նախագծի վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովի կողմից իր 89-րդ լիազումար նիստում ընդունված կարծիք (Վենետիկ, 2011 թվականի դեկտեմբերի 16-17), պրբ. 42

Ընդհանուր առմամբ, Վենետիկի հանձնաժողովի կարծիքով արտակարգ դրության երկարաձգումը միշտ լավագույն որոշումը չէ պետական անվտանգության վերահաստատման և իրավունքի գերակայության վերականգնման համար: Որոշ այլ երկրներում փորձը ցույց է տալիս, որ որքան երկար է տևում արտակարգ դրությունը, այնքան ավելի մեծ է հավանականությունը, որ Երկիրը կհեռանա այն օբյեկտիվ չափանիշներից, որոնք առաջին հերթին կհաստատելին արտակարգ դրությունում սահմանված լիազորությունների կիրառումը: Որքան այս իրավիճակը շարունակվի, այնքան ավելի քիչ արդարացում կլինի իրավիճակը բնույթով որպես բացառիկ համարելու համար, որի հետևանքով այն հնարավոր չէ շտկել նորմալ իրավական գործիքների կիրառմամբ: ՔՔԻՄԴ-ով, ՄԻԱ-ով շեշտվել է, որ շեղումները պետք է լինեն ժամանակավոր, և քննադատվել են երկարատև արտակարգ դրությունները (տե՛ս օրինակ՝ Իսրայելի (1998) և Եգիպտոսի (2002) հանձնաժողովի եզրափակիչ դիտողությունները):

[CDL-AD\(2016\)037](#), Թուրքիա. 2016 թվականի հուլիսի 15-ի ձևափակված հեղաշրջումից հետո ընդունված Արտակարգ դրության մասին N°s 667-676 օրենսդրական որոշումների վերաբերյալ կարծիք՝ ընդունված Վենետիկի հանձնաժողովի կողմից իր 109-րդ լիազումար նիստում 2016 թվականի դեկտեմբերի 9-10-ը, պրբ. 41

VIII. Արտակարգ միջոցների տևողությունը

Ինչ վերաբերում է կառուցողական (ընդհանուր) միջոցներին, արտակարգ դրության վերաբերյալ օրենսդրական որոշումների դրույթները պետք է կորցնեն իրենց ընդհանուր իրավական ուժն արտակարգ դրությունն ավարտվելուն պես: Մշտական օրենսդրական փոփոխությունները

պետք է ներդրվեն ոչ թե նման օրենսդրական որոշումների, այլ սովորական օրենսդրության միջոցով: Սա հատկապես կարևոր է պաշտպանության արդյունավետ միջոցների առկայության համար. պաշտպանության միջոցների տրամադրման ընթացակարգերի կողմերը կարող են փոփոխվել, սակայն պաշտպանության արդյունավետ միջոցները չեն կարող ամբողջությամբ վերանալ: Կառավարությանը չպետք է թույլատրվի բացառել իր սեփական գործողությունների դատական վերանայումը կամ այնպես փոխել ընթացակարգային կանոնները, որ սույն վերանայումը դառնա անարդյունավետ: Նմանապես Կառավարությունը չպետք է կարողանա ընդունել այնպիսի կանոններ, որոնք թուլացնում են այլ անկախ Պետական հաստատությունների դիրքը, փոխում են նրանց կազմը, գործունեության սկզբունքները և այլն:

[CDL-AD\(2016\)037](#), Թուրքիա. 2016 թվականի հուլիսի 15-ի ձևավորված հեղաշրջումից հետո ընդունված Արտակարգ դրության մասին N° 667-676 օրենսդրական որոշումների վերաբերյալ կարծիք՝ ընդունված Վենետիկի հանձնաժողովի կողմից իր 109-րդ լիազուսմար նիստում 2016 թվականի դեկտեմբերի 9-10-ը, պրբ. 80

Ինչ վերաբերում է «ժամանակի» չափանիշին, որով պահանջվում է, որ ցանկացած այդպիսի միջոց լինի սահմանափակ և ժամանակավոր, այն դեպքում, երբ տեղում ընդունվել են տարբեր տևողությամբ պարետային ժամեր (որոնք տևում էին մի քանի ժամից (ծայրահեղ դեպքերում՝ երկարատև պարետային ժամեր) մինչև մի քանի շաբաթ), ապա Տարածքային կառավարման մասին օրենքում առկա է այս թեմայի վերաբերյալ որևէ դրույթի նմանատիպ պակաս: Պարետային ժամերի տևողությունը սահմանված չէ նաև կառավարիչների որոշումներում:

[CDL-AD\(2016\)010](#), Թուրքիա. Պարետային ժամերի կառավարման իրավական շրջանակի վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովի կողմից իր 107-րդ լիազուսմար նիստում (Վենետիկ, 2016 թվականի հունիսի 10-11) ընդունված կարծիք, պրբ. 79

76. Այնուամենայնիվ, անհրաժեշտ է ընդունել այն փաստը, որ ի տարբերություն ընթացիկ Սահմանադրությանը՝ փոփոխված 119-րդ հոդվածը բացահայտ սահմանում է, որ արտակարգ դրության մասին նախագահի որոշումները, որոնք երեք ամսվա ընթացքում ԹԱՄԺ-ի կողմից չեն «քննարկվել և չեն ստորագրվել» պետք է ի պաշտոնե կորցնեն իրենց ուժը:

[...] 83. Արտակարգ դրության ժամանակ Նախագահը կարող է ընդունել օրենքի (119-րդ հոդվածի նախագիծ) ուժ ունեցող նախագահական որոշումներ: Այս որոշումները ենթակա չեն 104(17)-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումներին, այդ պատճառով դրանք կարող են առնչվել ցանկացած հարցին, այդ թվում՝ մարդու իրավունքներին: 15-րդ հոդվածում ամրագրված երաշխիքները, այնուամենայնիվ, կկիրառվեն նաև այդ դեպքում: Օրենքի ուժ ունեցող որոշումներն իրենց հրապարակման օրը պետք է ներկայացվեն ԹԱՄԺ-ին՝ հաստատման համար: Ժողովը պետք է երեք ամսվա ընթացքում քննարկի և հաստատի դրանք: Եթե սա չիրականանա, որոշումները պետք է ի պաշտոնե կորցնեն իրենց ուժը: Այս դրույթը ավելի հստակ է, քան նախագահական որոշումների մասին դրույթը, որն ընդունվել է արտակարգ դրության շրջանակներից դուրս:

[CDL-AD\(2017\)005](#), Թուրքիա. Վենետիկի հանձնաժողովի կողմից իր 110-րդ լիազուսմար նիստում (Վենետիկ, 2017 թվականի մարտի 10-11) ընդունված կարծիք՝ 2017 թվականի հունվարի 21-ին Ազգային մեծ ժողովի կողմից ընդունված և 2017 թվականի ապրիլի 16-ին Ազգային հանրաքվեի ներկայացվելիք Սահմանադրության փոփոխությունների մասին

IX. Արտակարգ միջոցների շրջանակը

Արտակարգ դրություն/շեղում հայտարարելու հիմնական հետևանքն այն է, որ Կառավարությունը կարող է ձեռնարկել որոշ միջոցներ, որոնք ընդունելի չեն լինի նորմալ հանգամանքներում: Մարդու իրավունքների եվրոպական համակարգի տեսանկյունից այս

ռեժիմը զգալիորեն ընդլայնում է արտակարգ դրության հաղթահարման մասով Կառավարության հայեցողական լիազորությունների շրջանակը (...):

[CDL-AD\(2016\)037](#), Թուրքիա. 2016 թվականի հուլիսի 15-ի ձևադրված հեղաշրջումից հետո ընդունված Արտակարգ դրության մասին N°s 667-676 օրենսդրական որոշումների վերաբերյալ կարծիք՝ ընդունված Վենետիկի հանձնաժողովի կողմից իր 109-րդ լիազումար նիստում 2016 թվականի դեկտեմբերի 9-10-ը, պրբ. 59

ա. Անհրաժեշտության և համաչափության սկզբունքները

Արտակարգ միջոցների անհրաժեշտության և համաչափության և իրավունքի գերակայությանը դրանց համապատասխանության վերլուծությունը պահանջում է դիմամիկ մոտեցում: ՄԻԵԴ-ը գտել է, որ 15-րդ հոդվածի 3-րդ պարբերությունը ենթադրում է արտակարգ միջոցների անհրաժեշտության մշտական վերանայման պահանջ, և որ 15-րդ հոդվածը պետք է արագ հարմարվողականության հնարավորություն տա: Նույնը վերաբերում է նաև որոշակի միջոցների համաչափության և անհրաժեշտության ավելի կոնկրետ վերլուծությանը. այն, ինչն արդարացվում է լայնածավալ հանրային ճգնաժամից անմիջապես հետո, չի կարող անհրաժեշտ լինել մի քանի ամիս անց:

[CDL-AD\(2016\)037](#), Թուրքիա. 2016 թվականի հուլիսի 15-ի ձևադրված հեղաշրջումից հետո ընդունված Արտակարգ դրության մասին N°s 667-676 օրենսդրական որոշումների վերաբերյալ կարծիք՝ ընդունված Վենետիկի հանձնաժողովի կողմից իր 109-րդ լիազումար նիստում 2016 թվականի դեկտեմբերի 9-10-ը, պրբ. 62

Վենետիկի հանձնաժողովը մատնանշում է նաև համաչափության սկզբունքի կարևորությունը: Այս պահանջը պետք է կիրառվի և՛ պարետային ժամի մասին որոշումների, և՛ դրանց կիրառման, և՛ այլ իրավունքների ազատությունների վրա ազդեցություն ունեցող այլ կից միջոցների նկատմամբ, որոնք կարող են բաղկացած լինել պարետային ժամի ընթացքում ժողովրդին պարտադրված հավելյալ սահմանափակումներից, ինչպիսիք են՝ դպրոցները և բիզնեսները փակելը, հանրային ծառայությունների մատուցման սահմանափակումները կամ հրապարակային միջոցառումների կամ այս համատեքստում իշխանությունների կողմից իրականացվող անվտանգության ապահովման գործունեության արգելքները: Ինչպես պարետային ժամերը, այս բոլոր միջոցները պետք է լինեն համաչափ սպառնալիքին և դրա անհետաձգելիությանը, չպետք է տևեն ավելի երկար, քան ինքը սպառնալիքը և պետք է կիրառվեն միայն այն շրջանների նկատմամբ, որոնք կրում են դրա ազդեցությունը: Համաչափության սկզբունքի կարևորությունը հաստատվում է (...) Սահմանադրությամբ:

[CDL-AD\(2016\)010](#), Թուրքիա. Պարետային ժամերի կառավարման իրավական շրջանակի մասին Վենետիկի հանձնաժողովի կողմից իր 107-րդ լիազումար նիստում (Վենետիկ, 2016 թվականի հունիսի 10-11) ընդունված կարծիք, պրբ. 81

բ. Երկարատև ազդեցություններ

Ցանկացած արտակարգ դրության ռեժիմի ամենակարևոր բնութագիրն իր ժամանակավոր բնույթն է: Սա ընդգծված է 1984 թվականին Միջազգային իրավունքի սուբստանցիալ կողմից ընդունված Արտակարգ դրության ժամանակ Փարիզի մարդու իրավունքների նորմերի նվազագույն ստանդարտների բաժին Ա-ի, 3 (ա)45 կետում: Սա ընդգծվել է նաև վերևում՝ մարդու իրավունքների և բացառիկ դրությունների մասով ՄԱԿ-ի Հաստիկ գեկուցողի կողմից: Վենետիկի հանձնաժողովը հաստատել է սա «Ազգի պաշտպանության մասին» Ֆրանսիայի սահմանադրական օրենքի նախագծի վերաբերյալ իր կարծիքում: Նմանապես, 4-րդ հոդվածի վերաբերյալ ՔՔԻՄ-ի No 29 ընդհանուր մեկնաբանությունը նշում է, որ Դաշնագրի դրույթներից շեղվող միջոցները պետք է ունենան «բացառիկ և ժամանակավոր բնույթ»:

Բարդ է այն հարցը, թե արտակարգ դրության ռեժիմի պայմաններում ձեռնարկված անհատական միջոցները ինչ չափով կարող են մշտական ազդեցություն ունենալ (այն է՝ արդյոք

դրանց ազդեցությունները կարող են գերազանցել արտակարգ դրության ժամանակահատվածը): Այստեղ պետք է տարբերակել անհատական միջոցները և կառուցողական (ընդհանուր) միջոցները: Անհատական միջոցները երբեմն կարող են լինել անբեկանելի այն դեպքում, երբ վտանգը հնարավոր է կանխել միայն անդառնալի գործողությամբ: Ուստի, արտակարգ դրության ռեժիմի ժամանակ Կառավարությունը պետք է հնարավոր առավելագույն չափով և վտանգի այլ կերպ կանխելը հնարավոր լինելու դեպքում փորձի ձեռնարկել ժամանակավոր անհատական միջոցներ, այն է՝ այնպիսի միջոցներ, որոնք սահմանափակ ընթացք ունեն կամ կարող են ավելի ուշ չեղարկվել կամ փոփոխվել, քանի որ ցանկացած արտակարգ դրության վերջնական նպատակը պետք է լինի Երկիրն իր բնականոն վիճակին վերադարձնելը:

[CDL-AD\(2016\)037](#), Թուրքիա. 2016 թվականի հուլիսի 15-ի ձևավորված հեղաշրջումից հետո ընդունված Արտակարգ դրության մասին N°s 667-676 օրենսդրական որոշումների վերաբերյալ կարծիք՝ ընդունված Վենետիկի հանձնաժողովի կողմից իր 109-րդ լիազումար նիստում 2016 թվականի դեկտեմբերի 9-10-ը, պրբ. 78 և 79

Իր նախկին կարծիքներում հղում կատարելով համապատասխան միջազգային նորմերին ու սկզբունքներին՝ Վենետիկի հանձնաժողովն ընդգծել է, որ ցանկացած արտակարգ դրության ռեժիմի ամենակարևոր բնութագիրը իր ժամանակավոր բնույթն է: Այն, ինչն արդարացվում է լայնածավալ հանրային ճգնաժամից անմիջապես հետո, չի կարող անհրաժեշտ լինել մի քանի ամիս անց: Ավելին, ազգային օրենսդրությունում կատարված մշտական փոփոխությունները պետք է ներդրվեն նորմալ ժողովրդավարական քաղաքական գործընթացի շրջանակներում՝ ընդունված օրենքներով, որոնք ընդունումից առաջ մանրամասն մշակվել և պատշաճ կարգով քննարկվել են Խորհրդարանում:

[CDL-AD\(2017\)021](#), Թուրքիա. Տեղական ժողովրդավարության իրականացմանն առնչվող Արտակարգ դրության մասին 2016 թվականի սեպտեմբերի 1-ի N° 674 օրենսդրական որոշման դրույթների վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովի կողմից իր 112-րդ լիազումար նիստում (Վենետիկ, 2017 թվականի հոկտեմբերի 6-7) ընդունված կարծիք, պրբ. 58

գ. Հատուկ խնդիրներ

121. [...] Օգտակար կարող է լինել նաև արտակարգ իրավիճակներում որոշ հատուկ խնդիրների մասով գործադիրի օրենսդրական լիազորությունների սահմանափակումն այնպես, որ գործադիրը չկարողանա իր օրենսդրական գործառույթները ծառայեցնել ընդդիմության իրավունքները ճնշելուն: [...] Այս սահմանափակումները թույլ չեն տալիս գործադիրին արտակարգ դրությունն օգտագործել որպես ընդդիմության իրավունքները սահմանափակելու պատրվակ:

[CDL-AD\(2019\)015](#), Ժողովրդավարական երկրում Խորհրդարանական մեծամասնության և Ընդդիմության միջև հարաբերությունների բնութագրերը. ստուգացուցակ

դ. Մեկնաբանություն

Բացի այդ, քանի որ պարետային ժամի համակարգն իր բնույթով հիմնարար իրավունքների համար սահմանափակումներ ենթադրող բացառիկ միջոց է, այն ղեկավարող տեքստերը պետք է մեկնաբանվեն մանրամասն և՛ նյութի, և՛ իրավասության, և՛ շրջանակի առումով:

[CDL-AD\(2016\)010](#), Թուրքիա. Պարետային ժամերի կառավարման իրավական շրջանակի մասին Վենետիկի հանձնաժողովի կողմից իր 107-րդ լիազումար նիստում (Վենետիկ, 2016 թվականի հունիսի 10-11) ընդունված կարծիք, պրբ. 73

ե. Սահմանադրական փոփոխություն

Զգալի թվով սահմանադրություններ ունեն պատերազմի, արտակարգ դրության կամ

նմանատիպ իրավիճակների ժամանակ սահմանադրական փոփոխությունները սահմանափակող դրույթներ (տե՛ս վերևում, Բաժին III, Պրբ. 52-53): Թեև սա սահմանափակում է սահմանադրական փոփոխությունները, այն բնույթով *ժամանակավոր է* և հիմնավորումը շատ տարբեր է էական անփոփոխելիության հիմնավորումից: Այս առումով հանձնաժողովը ցանկանում է ընդգծել, որ գերադասելի է, որ սահմանադրական օրենսդիրն ինքը որոշի, թե երբ է առկա նման արտակարգ իրավիճակը: Մա կարող է խնդրահարույց լինել, եթե նման կանոնները հանգեցնեն գործադիր իշխանությանը՝ օրինականորեն առաջարկված բարեփոխումը խոչընդոտելու հնարավորության տրամադրմանը: Ուստի, «պատերազմի» հասկացությունը պետք է ընկալել սահմանափակ ձևով՝ չներառելով ազգային մասնակցությունը միջազգային ռազմական հակամարտություններում:

[CDL-AD\(2010\)001](#), Սահմանադրական փոփոխության մասին գեկույց, պրբ. 224

29. Միջազգային օրենսդրության մեջ չկա արտակարգ իրավիճակներում՝ ինչպես օրինակ պատերազմական իրավիճակներում, ռազմական դրության, պաշարման դրության կամ արտակարգ միջոցների կիրառման շրջանակներում, սահմանադրական փոփոխությունները խոչընդոտող որևէ պաշտոնական կանոն: Այդուհանդերձ, այդպիսի արգելքն առկա է որոշ սահմանադրություններում (Ալբանիա, Էստոնիա, Վրաստան, Լիտվա, Մոլդովա, Չեռնոգորիա, Լեհաստան, Պորտուգալիա, Ռումինիա, Սերբիա, Իսպանիա, Ուկրաինա): Օրինակ՝ Լեհաստանի Սահմանադրության 228-րդ հոդվածի 6-րդ պարբերությունը հստակ սահմանում է, որ «արտակարգ միջոցների ներդրման ժամանակահատվածի ընթացքում հետևյալը, ավելի կոնկրետ՝ Սահմանադրությունը, Մեյմի, Սենատի և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների մասին օրենքները փոփոխության ենթակա չեն (...): Նմանապես, Լիտվայի Սահմանադրության 147(2)-րդ հոդվածը սահմանում է, որ «արտակարգ դրության կամ ռազմական դրության ընթացքում Սահմանադրությունում փոփոխություններ չեն կարող կատարվել», իսկ Ուկրաինայի Սահմանադրության 157-րդ հոդվածը սահմանում է, որ «Ուկրաինայի Սահմանադրությունը չպետք է փոփոխվի ռազմական դրության կամ արտակարգ դրության պայմաններում»: Թուրքիայի Սահմանադրությունը ոչ մի նման դրույթ չունի:

30. Այս արգելքն արտացոլում է քաղաքական համակարգի հիմունքների՝ մասնավորապես Սահմանադրության և ընտրական համակարգի պաշտպանության կարևորությունը: Քննարկումից հետևում է, որ արտակարգ դրությունը կարող է սահմանափակումներ առաջացնել խորհրդարանի բնականոն գործունեության (հատկապես ընդդիմության դերի) համար, ինչպես նաև շատ հաճախ հանգեցնել ՋԼՄ-ների սահմանափակ գործունեությանը և քաղաքական ազատությունների, ինչպես օրինակ հավաքների ազատության գործարկման սահմանափակումներին: Այս պայմաններում սահմանադրական փոփոխության ժողովրդավարական գործընթացը չի կարող ամբողջովին երաշխավորվել:

[CDL-AD\(2017\)005](#), Թուրքիա. 2017 թվականի հունվարի 21-ին Ազգային մեծ ժողովի կողմից ընդունված և 2017 թվականի ապրիլի 16-ին Ազգային հանրաքվեի ներկայացվելիք Սահմանադրության փոփոխությունների վերաբերյալ կարծիք, պրբ. 30-31

121. [...]Առաջարկվում է արտակարգ դրության ընթացքում սահմանադրական փոփոխություններ չկատարել ([CDL-AD\(2017\)005](#), պրբ. 29): Այս սահմանափակումները թույլ չեն տալիս գործադիրին արտակարգ դրությունն օգտագործել որպես ընդդիմության իրավունքները սահմանափակելու պատրվակ:

[CDL-AD\(2019\)015](#), Ժողովրդավարական երկրում Խորհրդարանական մեծամասնության և Ընդդիմության միջև հարաբերությունների բնութագրերը. ստուգացուցակ

գ. Տեղական ինքնակառավարման մարմինների մասով լիազորությունները

Որոշ դաշնային Երկրներում արտակարգ դրություն հայտարարելը կարող է ներառել պետական և տեղական իշխանություններից լիազորությունների հանձնումը կենտրոնական կառավարությանը:

[CDL-STD\(1995\)012](#), Արտակարգ լիազորություններ

7-րդ հոդվածի 2-րդ պարբերությունը սահմանում է արտակարգ դրության ժամանակ Նախագահի՝ «պետական և տեղական ինքնակառավարման մարմինների իրավական ակտերը (բացառությամբ օրենքների և դատական ակտերի) կասեցնելու» լիազորությունները: Նախագահի լիազորությունները չափազանց ընդհանրական են սահմանված: Բացի այդ, սույն լիազորությունները նույնպես պետք է կիրառվեն Նախագահի որոշումների միջոցով: «Օրենքներին և դատական ակտերին» առնչվող բացառության շրջանակը և հետևանքները այդքան էլ պարզ չեն. նախագծի 7-րդ հոդվածի առաջին պարբերությունում թվարկված միջոցներից մի քանիսը և նախագծի 9-րդ հոդվածում թվարկված լիազորություններից մի քանիսը ենթադրում են ժամանակավոր շեղում օրենքից, ինչը փաստորեն հավասարազոր է նշված օրենքի մասնակի կասեցմանը: Խորհուրդ է տրվում կրկին քննարկել կամ պարզաբանել այս հարցը:

[CDL-AD\(2011\)049](#), Հայաստանի արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին օրենքի նախագծի վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովի կողմից իր 89-րդ լիազումար նիստում (Վենետիկ, 2011 թվականի դեկտեմբերի 16-17) ընդունված կարծիք, պրբ. 34

Վենետիկի հանձնաժողովի կարծիքով նահանգապետության կողմից նման ուժեղացված հսկողությունը հավասարազոր է համայնքապետարանների, դրա ընտրված իշխանությունների, աշխատակազմի և ռեսուրսների նկատմամբ պետական ներկայացուցչությունների ընդգրկուն, հայեցողական լիազորությանը: Ավելին, չնայած ահաբեկչությանն առնչվող կասկածելի գործողությունների մասով սահմանված լինելուն՝ այս լիազորությունը սահմանափակված չէ արտակարգ դրությունը բնութագրող բացառիկ իրավիճակներով: Ուստի, Օրենսդրական որոշմամբ Մունիցիպալ իրավունքում ներդրված փոփոխությունները կարող են իրավամբ, ինչպես նշել է Կոնգրեսը, դիտարկվել որպես ավելի ընդհանուր՝ արտակարգ դրության պահանջների սահմաններից դուրս եկող, Թուրքիայի տեղական պետական կառավարման «վերակենտրոնացմանն» ընդառաջ արված քայլի արտացոլում: Սա խնդրահարույց է արտակարգ դրության մասին և՛ միջազգային, և՛ ազգային կանոնների, և՛ Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայով Թուրքիայի՝ տեղական ինքնակառավարման մասով սահմանված պարտավորությունների տեսանկյունից:

[CDL-AD\(2017\)021](#), Թուրքիա. Տեղական ժողովրդավարության իրականացմանն առնչվող Արտակարգ դրության մասին 2016 թվականի սեպտեմբերի 1-ի N° 674 օրենսդրական որոշման դրույթների վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովի կողմից իր 112-րդ լիազումար նիստում (Վենետիկ, 2017 թվականի հոկտեմբերի 6-7) ընդունված կարծիք, պրբ. 92

է. Ռազմական տրիբունալներ, իշխանություններ և զինված ուժեր

116. Զինված ուժերը կարող են աջակցություն տրամադրել քաղաքացիական իշխանություններին, երբ վերջիններս չկարողանան պահպանել օրենքը և կարգը: 76 Իրավապահ ոլորտում ռազմական օգնությունը հատկապես հակասական է, և զինված ուժերի կողմից տրամադրված աջակցության չափը խիստ տարբերվում է Եվրոպական խորհրդի անդամ պետությունների միջև: Այս ոլորտում հնարավոր ռազմական դերերի շրջանակը հաճախ կախված է ռազմականացված ոստիկանական ուժերի առկայությունից (բացակայությունից): Այն

պետություններում, որտեղ առկա են միջանկյալ ուժեր, զինված ուժերը ընդհանուր առմամբ ավելի սահմանափակված են գործունեության ոլորտի տեսանկյունից: Շատ երկրներում զինված ուժերի միջոցով հանրային կարգի պահպանումը ղեկավարվում է խիստ օրենքներով, և շատ դեպքերում պաշտոնական «արտակարգ դրությունն» անհրաժեշտ է նախքան գործերի տեղակայումը: [...]

125. Աղետների հետևանքների մեղմացման մասով գործողությունների դեպքում որոշ սահմանադրություններ բացահայտ կարգավորում են ռազմական ուժերի կիրառումը: Այլ երկրներում, օրինակ Դանիայում նույնիսկ ներքին ճգնաժամային իրավիճակներում ռազմական ուժերի դերի հստակեցման համար սահմանված կոնկրետ սահմանադրական դրույթների բացակայության պայմաններում Պաշտպանության նախարարն իրավունք ունի հրահանգել զինված ուժերին «ներպետական հումանիտար օգնություն» տրամադրել: Այլ իրավական համակարգերը օրենքի միջոցով զինված ուժերին իրավունք են տալիս մասնակցել բնական աղետների, բնությանը վերահաս արտակարգ սպառնալիքների ազդեցությունների մեղմացման գործընթացին և որոնողափրկարարական առաքելություններին: Միացյալ Թագավորությունում զինված ուժերն ունեն նույն լիազորությունները և պարտավորությունները, ինչ ցանկացած քաղաքացի, այն է՝ աջակցություն տրամադրել, երբ քաղաքացիական իշխանություններին անհրաժեշտ լինի օգնություն աղետների դեմ պայքարելու համար: Բացի այդ, արտակարգ դրություն հայտարարելու համար կառավարությունը կարող է վկայակոչել Արտակարգ լիազորությունների մասին օրենքով (ինչպես նաև վերոնշյալ Քաղաքացիական վթարային իրավիճակների մասին վերջին օրենքով) նախատեսված լիազորությունները: Ի վերջո, որոշ երկրների զինված ուժերի ներսում առկա են հատուկ միավորներ, որոնք նախատեսված են այս օգնության հանձնարարությունները կատարելու համար: Նշվածի մեկ օրինակ է Իսպանիան իր Արտակարգ գործառնափրկումներով:

126. Զինված ուժերը կարող են նաև կոչված լինել կենսաբանական աղետների, այն է՝ պաթոգեն միկրոօրգանիզմի և տոքսինների բռնկման ժամանակ պետական իշխանություններին օգնելու համար:⁹³ Կենսաբանական սպառնալիքները կարող են սկիզբ առնել պետությունների, ոչ պետական գործիչների կողմից ձեռնարկված հարձակումներից կամ առաջանալ բնական զարգացումների հետևանքով: Շատ պետություններ ունեն գործող հստակ իրավական շրջանակ, որը սահմանում է, թե երբ ու ինչպես զանազան մասնակիցներ պետք է ներգրավվեն կենսաբանական ռիսկերի կառավարման գործընթացում. այս դրույթները սովորաբար պետք է ներառեն քաղաքացիառազմական համագործակցության դրույթներ: [...]

132. Խորհրդարանները հիմնականում իրականացնում են նախնական վերահսկողություն՝ ընդունելով անվտանգության ծառայությունները և դրանց լիազորությունները սահմանող և կարգավորող օրենքները և համապատասխան բյուջետային հատկացումները: Խորհրդարանի մասնակցությունը անվտանգության ազգային իրավական շրջանակի ստեղծմանը ներկայացնում է Խորհրդարանի կանխազդիչ գործառույթը, որն ուղղված է գործադիր մարմնի հետագա քաղաքականություններին և գործողություններին: Նախնական վերահսկողությունը կարող է ներառել օրինակ գործերն արտերկիր ուղարկելու կամ գործի կողմից արտակարգ կամ պաշարման դրությանը միջամտելու նախնական իրավունքի շնորհումը՝ անհրաժեշտ քանակով ռստիկանության ու ներքին անվտանգության այլ ուժերի անհասանելի լինելու դեպքում: Նախնական վերահսկողությունը նախնառաջ վերապահված է գործադիր մարմնին: Գործադիր մարմինը պատասխանատու է զինված ուժերի (որը պատվիրակված է ռազմական ղեկավարությանը) ինչպես նաև զինված ուժերի քաղաքականության և ռազմավարությունների ամենօրյա կառավարման համար: [...]

կողմից իր 74-րդ լիազուստար նիստում ընդունված զեկույց (Վենետիկ, 2008 թվականի մարտի 14-15)

Որոշ դեպքերում ռազմական տրիբունալների ստեղծումը հատկապես արգելվում է սահմանադրությամբ (Ռուսաստան): Այլ դեպքերում ռազմական տրիբունալները կարող են ստեղծվել հատկապես պատերազմի ժամանակ: [...]

Որոշ երկրներում (Պորտուգալիա, Հունաստան և Թուրքիա) պաշարման դրությունը նույնպես ներառում է ոստիկանության որոշ լիազորությունների փոխանցումը ռազմական իշխանություններին: Այլ երկրներում (Գերմանիա, Ֆինլանդիա, Ռուսաստան, Լեհաստան, Հունգարիա, Լատվիա և Մալթա) սա հնարավոր չէ: [...]

[CDL-STD\(1995\)012](#), Արտակարգ լիազորություններ

X. Ընտրություններ արտակարգ դրությունների ընթացքում

ա. Ընդհանուր

31. Միջազգային իրավունքում չկա ոչ մի պաշտոնական կանոն, որը Երկրներին թույլ չտա արտակարգ իրավիճակների պայմաններում ընտրություններ և հանրաքվեներ անցկացնել: Այնուամենայնիվ, որոշ սահմանադրությունների համաձայն արտակարգ իրավիճակը հետաձգում է կամ հնարավորություն է տալիս հետաձգել սպասվելիք ընտրությունները, օրինակ՝ խորհրդարանի պաշտոնավարման ժամկետը երկարաձգելով (Խորվաթիա, Բուլղարիա, Գերմանիա, Հունաստան, Լեհաստան, Լիտվա, Սլովենիա, Բուլղարիա, Հունգարիա և Կանադա): Նմանապես, արտակարգ իրավիճակը կարող է արգելել խորհրդարանի լուծարումը (Գերմանիա, Բուլղարիա, Պորտուգալիա, Լեհաստան, Հունգարիա, Ռուսաստան): Թուրքիայում պատերազմական դրություն հայտարարելը հանգեցնում է ընտրությունների հետաձգմանը (Սահմանադրության 78-րդ հոդված):

32. Այս կանոնն արտացոլում է այն խնդիրը, որ արտակարգ իրավիճակների պայմաններում պետություններն ի վիճակի չեն լինի հետևել ազատ և արդար ընտրությունների ընթացքի ստանդարտներին, այդ թվում՝ Վենետիկի հանձնաժողովի կողմից Հանրաքվեի բարեխիղճ գործելակերպի վերաբերյալ կանոնադրքում ամրագրված ստանդարտներին: Այս ստանդարտների համաձայն հանրաքվեները պետք է հիմնված լինեն համընդհանուր, հավասար, ազատ և գաղտնի ընտրական իրավունքի սկզբունքի վրա: Հանրաքվեի դրված հարց(եր)ը պետք է հստակ ձևակերպվ(են)ի: Հանրաքվեն պետք է կազմակերպվի անկախ մարմնի կողմից: Իշխանությունները պետք է օբյեկտիվ տեղեկություններ տրամադրեն, և դրանք չպետք է միակողմանի քարոզարշավի միջոցով ազդեն քվեարկության արդյունքի վրա: Հանրային լրատվամիջոցները պետք է լինեն չեզոք, հատկապես նորությունների լուսաբանման առումով: Մարդու հիմնարար իրավունքները, հատկապես ազատ արտահայտվելու իրավունքը, հավաքների ազատության իրավունքը, անվտանգության իրավունքը պետք է ամբողջովին հարգել:

33. Նախկինում Վենետիկի հանձնաժողովը շեշտել է, որ «ժողովրդավարական ընտրությունների անցկացումը, և, հետևաբար, ժողովրդավարության առկայությունն անհնար է առանց մարդու իրավունքների, հատկապես արտահայտվելու և լրատվամիջոցների ազատության իրավունքի և հավաքների ու քաղաքական նպատակներով, այդ թվում՝ քաղաքական կուսակցությունների ստեղծման նպատակով միավորումների ազատության իրավունքի նկատմամբ ցուցաբերած հարգանքի: Այս ազատությունների նկատմամբ հարգանքը

առանցքային է հատկապես նախընտրական քարոզարշավների ժամանակ: Այս հիմնարար իրավունքների սահմանափակումները պետք է համապատասխանեն Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիային և, առհասարակ, օրինական հիմք ունենալու, համընդհանուր շահին ուղղված լինելու և համաչափության սկզբունքը հարգելու պահանջին:

34. Վենետիկի հանձնաժողովի կարծիքով ակնհայտ է, որ առկա է վտանգ, որ ժողովրդավարական գործընթացը կխափանվի, երբ իրավունքի գերակայության «նորմալ» գործընթացների նկատմամբ սահմանվեն սահմանափակումներ: Առկա է արտակարգ դրության ժամանակ հիմնարար ընտրական սկզբունքների, հատկապես հնարավորության հավասարության սկզբունքի՝ կասկածի տակ դրվելու վտանգը: Նմանապես, աքսիոմային է, որ շեղումն անհատների քաղաքացիական և քաղաքական իրավունքներից ստեղծում է արդյունքների՝ ոչ ժողովրդավարական լինելու վտանգ:

35. Իսկապես, հանձնաժողովը բարենպաստ համարեց Վրաստանում ներդրված սահմանադրական դրույթը, որով սահմանվում էր, որ ոչ մի ընտրություն չի կարող անցկացվել արտակարգ դրության կամ ռազմական դրության ընթացքում, ինչպես նաև արտակարգ դրության ավարտից հետո 60 օրվա ընթացքում, քանի որ «ընտրությունների համար անհրաժեշտ է խաղաղ քաղաքական միջավայր և բոլոր ազատությունների ու մարդու իրավունքների և հանրային կարգի ու անվտանգության լիակատար երաշխավորման պայմանի ամբողջական իրականացում»:

[CDL-AD\(2017\)005](#), Թուրքիա. Վենետիկի հանձնաժողովի կողմից իր 110-րդ լիազուսար նիստում (Վենետիկ, 2017 թվականի մարտի 10-11) ընդունված կարծիք՝ 2017 թվականի հունվարի 21-ին Ազգային մեծ ժողովի կողմից ընդունված և 2017 թվականի ապրիլի 16-ին Ազգային հանրաքվեի ներկայացվելիք Սահմանադրության փոփոխությունների մասին

[...] Ոչ այնքան հստակ փոփոխությունը Խորհրդարանին հնարավորություն կտա վաղաժամ ընտրություններ անցկացնել նույնիսկ արտակարգ դրության կամ ռազմական դրության պայմաններում: Արտակարգ դրության կամ ռազմական դրության պայմաններում ազատ և արդար ընտրությունների անցկացման պայմանների բավարարումը անհնար է թվում:

[CDL-AD\(2004\)008](#), Վրաստանի Սահմանադրության փոփոխությունների նախագծի վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովի կողմից իր 58-րդ լիազուսար նիստում (Վենետիկ, 2004 թվականի մարտի 12-13) ընդունված կարծիք, պրբ. 9 և 10

բ. Սահմանադրական հանրաքվեներ

36. Վերլուծությունը նվազագույնը նույն ուժով կիրառելի է առաջարկված սահմանադրական հանրաքվեների և, հատկապես, քաղաքական համակարգի փոփոխության հանրաքվեների նկատմամբ, չնայած ընդհանուր առմամբ ընդունված է, որ առկա սահմանադրական կարգի ամբողջական տապալումը կարող է պահանջել սահմանադրական հանրաքվե արտակարգ դրության ընթացքում: Արտակարգ դրության ժամանակ մշտական սահմանադրական փոփոխության իրականացման հարցը կախված է նրանից, թե արդյոք առկա են այնպիսի հանգամանքներ, որոնց պարագայում ժողովրդավարական սկզբունքները կգերակայեն: Հաջորդող պարբերությունները հիմնված են դրա վրա:

[...] 42. Առկա է ժողովրդավարական չափանիշներին համապատասխանող երկու հնարավորություն. եթե սահմանադրական հանրաքվեն պետք է միանշանակ անցկացվի արտակարգ դրության ժամանակ, անհրաժեշտ է վեր հանել քաղաքական ազատությունների նկատմամբ առկա սահմանափակումները կամ սահմանափակումների վերացման անհնարիության դեպքում սահմանադրական հանրաքվեն պետք է չեղարկվի մինչև արտակարգ դրության ավարտը:

[CDL-AD\(2017\)005](#), Թուրքիա. Վենետիկի հանձնաժողովի կողմից իր 110-րդ լիազույցումը նիստում (Վենետիկ, 2017 թվականի մարտի 10-11) ընդունված կարծիք՝ 2017 թվականի հունվարի 21-ին Ազգային մեծ ժողովի կողմից ընդունված և 2017 թվականի ապրիլի 16-ին Ազգային հանրաքվեի ներկայացվելիք Սահմանադրության փոփոխությունների մասին

գ. Արտահերթ նախագահական ընտրությունները ռազմական և արտակարգ իրավիճակների ընթացքում

Փոփոխությունների նախագծի 72-րդ հոդվածը պարբերություն է լրացնում Օրենսգրքի 91-րդ հոդվածում, որն արգելում է արտահերթ նախագահական ընտրությունների անցկացումն արտակարգ իրավիճակների ընթացքում: Արտահերթ նախագահական ընտրությունները պետք է անցկացվեն ռազմական կամ արտակարգ իրավիճակի ավարտից հետո 40-րդ օրը: Թեև ռազմական և արտակարգ իրավիճակների պայմաններում ընտրություններ չանցկացնելը կարող է նպատակահարմար համարվել, առկա է վտանգ, որ նման իրավիճակները կարող են հրահրվել կամ չարաշահվել սահմանադրական միջոցներով արտահերթ ընտրությունների անցկացումը կանխելու համար:

[CDL-AD\(2006\)026](#), Հայաստանի Հանրապետության Ընտրական օրենսգրքում փոփոխությունների նախագծի վերաբերյալ միասնական կարծիք, պր. 51

34. Արտակարգ կամ ռազմական դրությունների դեպքում արտահերթ նախագահական ընտրություններն արգելվում են և պետք է անցկացվեն արտակարգ կամ ռազմական իրավիճակի ավարտից հետո 40-րդ օրը (Օրենսգրքի 91-րդ հոդվածը փոփոխվել է փոփոխությունների 80-րդ հոդվածով): Նախկին համատեղ եզրակացության 51-րդ պարբերությունը զգուշացրել է, որ կարող է առկա լինել այս դրույթը արտահերթ ընտրությունների անցկացումը կանխելու նպատակով հրահրելու կամ չարաշահելու վտանգ: Արտակարգ կամ ռազմական իրավիճակի ավարտի հստակ ժամկետը նույնպես պարզ չէ՝ հաշվի առնելով, որ 40-օրյա ժամկետը սահմանվում է այս ժամանակահատվածի հիման վրա:

[CDL-AD\(2007\)013](#) Վենետիկի հանձնաժողովի կողմից իր 70-րդ լիազույցումը նիստում ընդունված (Վենետիկ, 2007 թվականի մարտի 16-17) Հայաստանի Հանրապետության Ընտրական օրենսգրքում փոփոխությունների վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովի և ԵԱՀԿ Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի (ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ) համատեղ վերջնական կարծիքը

դ. Ընտրությունների հետաձգումը

Դ. Արտակարգ լիազորություններ

51. Սահմանադրական կարգի պահպանման լեգիտիմ նպատակը կարող է արդարացնել ընտրությունների հետաձգումը բացառիկ իրավիճակների պայմաններում, ինչպիսիք են պատերազմական դրությունը կամ բնական աղետները: Երբ ծայրահեղ ճգնաժամը վատ ազդեցություն է ունենում երկրի վրա, ընտրությունները կարող են իսկապես սրացնել քաղաքական բախումները, և գուցե անհրաժեշտ լինի ճգնաժամի լուծում գտնել: Չափազանց բացառիկ պայմաններում լարվածությունները նվազեցնելու և ընտրողներին իրենց կամքը անվտանգ և պատշաճ կարգով ձևակերպված համատեքստում արտահայտելու հնարավորության տրամադրման հեռանկարով ընտրությունների հետաձգումը կարող է լինել իշխանությունների պարտավորությունը:

54. Վենետիկի հանձնաժողովը ... կարող է իրավական տեսանկյունից ուսումնասիրել

արտակարգ իրավիճակների հարցը, այն պայմանով, որ առանց այս տեսակի կոնկրետ վտանգին անդրադառնալու No 11199 Որոշման Պատճառաբանությունը վերաբերում է «քաղաքացիական բախման ռիսկին» ինչպես նաև «հանրային կարգի կայունությանը» սպառնացող վտանգին, որը կարող է նաև սպառնալիք հանդիսանալ ազգային անվտանգության համար»: Ընդունելով այդպիսի վտանգի առկայության հնարավորության մասին պնդումը՝ հարցը դառնում է այն, թե ո՞վ իրավունք ունի որոշում կայացնել ազգային սահմանադրության համաձայն:

55. Սահմանադրության 86(1)-րդ հոդվածի համաձայն Նախագահը «ներկայացնում է ազգի միասնությունը»: Արտակարգ իրավիճակները հաճախ պահանջում են հատուկ միջոցներ, և այն Նախագահը, որի առաջնային առաքելությունը ժողովրդի միասնության ներկայացումն է, ունի սահմանադրական մանդատ պետության բնականոն գործունեությունը խթանելու համար: Սույն մանդատը միանշանակ ներառում է Պետական դերակատարների և քաղաքական կուսակցությունների հետ երկխոսության կոչերը, իսկ Նախագահն անընդհատ քաղաքական գործիչներին երկխոսությանը մասնակցելու կոչ է արել: Այս ելակետից հարկավոր է ուսումնասիրել, թե արդյոք Նախագահն ունի արտակարգ դրության մասով հստակ լիազորություններ, որոնք սահմանադրական և իրավական հիմք կձառայեին այդ պայմաններում ընտրությունները հետաձգելու համար:

56. Նախագահի Պատճառաբանությունները չեն վերաբերում Սահմանադրության 170-րդ հոդվածին, այնուամենայնիվ, կարևոր է ուսումնասիրել, թե արդյոք սույն դրույթը կարող է ծառայած լինել որպես հունիսի 10-ի որոշման հիմք:

57. Ալբանիայի Սահմանադրության 170(1)-րդ հոդվածի համաձայն՝ «Արտակարգ միջոցներ կարող են ձեռնարկվել պատերազմական դրության, արտակարգ դրության կամ բնական աղետի պատճառով և տևել այդ դրությունների ողջ ընթացքում»:

58. Իր հերթին, 170-րդ հոդվածի 2-րդ մասը պահանջում է, որ «պետական մարմինների գործունեության սկզբունքները, ինչպես նաև արտակարգ միջոցներ պահանջող իրավիճակների ողջ ընթացքում մարդու իրավունքների և ազատությունների սահմանափակումների չափը սահմանվի օրենքով»: Սա նշանակում է, որ նույնիսկ արտակարգ իրավիճակների պայմաններում արտակարգ միջոցները պետք է հիմնված լինեն օրենքի վրա:

59. Ալբանիայի սահմանադրության 170(6)-րդ հոդվածի համաձայն՝ «արտակարգ միջոցների կիրառման ժամանակահատվածում տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններ, հանրաքվեներ չեն կարող անցկացվել, և չի կարող ընտրվել Հանրապետության նոր Նախագահ: Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունները կարող են անցկացվել միայն այն վայրերում, որտեղ արտակարգ միջոցներ չեն կիրառվում»: Սա նշանակում է, որ իրավամբ ընտրությունները չեն կարող անցկացվել արտակարգ դրության ժամանակ:

62. [...] 170-րդ հոդվածի արտակարգ լիազորությունները չեն կարող ծառայել որպես իրավական հիմք Նախագահի ընտրությունների հետաձգման համար: Նախագահը կարող է հղում կատարել կրիտիկական իրավիճակին, որը Սահմանադրության 170-րդ հոդվածով երաշխավորվող գործողության մակարդակից ցածր է: Այնուամենայնիվ, Սահմանադրությունը ընտրությունները չանցկացնելը բացահայտ կապում է արտակարգ դրության հետ: Հետևաբար, ճգնաժամի ցածր մակարդակը կարող է չարդարացնել ընտրությունների չեղարկումը կամ հետաձգումը նման իրավասություն չունեցող պետական մարմնի կողմից:

Ընտրությունների օրը նշանակելու հետ կապված ընդհանուր համեմատական նկարագիր

10. ... Որոշ պետությունների համար արտակարգ դրության դեպքում Խորհրդարանն ունի ընտրությունների օրը փոխելու իրավասություն (Չեխիայի Հանրապետություն, Սլովենիա):

11. Որոշ երկրներում ընտրությունները հետաձգվել են կամ դրա համար առկա է հստակ իրավական հիմք.

- Ջրհեղեղի, հրդեհի կամ այլ աղետի դեպքում (2002 թվականին Կանադան, Կոստա Ռիկան որոշ համայնքային ընտրությունների համար, Իսլանդիան 1958 թվականին, Սլովենիան²),

12. Հաճախ ընտրությունները հետաձգելու մասին ոչ մի հստակ դրույթ առկա չի լինում: Չեխիայի Հանրապետության անվտանգության մասին No. 110/1998 հավաք. սահմանադրական օրենքը բացառություն է, քանի որ այն սպառնում է ընտրությունների հետաձգման հնարավորությունը հետևյալ պայմաններում. «Եթե արտակարգ դրության ժամանակահատվածում պետության դեմ առկա սպառնալիքի կամ պատերազմական վիճակի պայմաններում Չեխիայի Հանրապետության պայմանները թույլ չեն տալիս հերթական ընտրական ժամկետներով սահմանված վերջնաժամկետով ընտրությունների անցկացումը, վերջնաժամկետը կարող է երկարաձգվել օրենքով, սակայն ոչ ավելին քան վեց ամսով:

13. Նմանապես, Կորեայի Հանրապետության Հանրային պաշտոնական ընտրությունների մասին օրենքի 196-րդ հոդվածի համաձայն՝ Նախագահը կարող է հետաձգել (Նախագահի կամ Ազգային ժողովի) ընտրությունը, և տարածաշրջանային իրավասու ընտրական հանձնաժողովի ղեկավարը (տեղական ընտրության համար) կարող է հետաձգել ընտրությունը բնական աղետի, երկրաշարժի կամ ցանկացած այլ [ան]խուսափելի հանգամանքների դեպքում:

15. Նորվեգիան ներկայում վերանայում է Ընտրությունների մասին իր 2002 թվականի օրենքը, ի թիվս այլնի՝ դրանում՝ ընտրություններն ընդհատող բնական աղետների (համաճարակների, կամ հաղորդակցության լայնատարած խզման, օրինակ՝ կիբերհարձակման հետևանքով կամ էլեկտրաէներգիայի մատակարարման խզման պատճառով), ահաբեկչական հարձակումների կամ այլ արտակարգ իրավիճակների դեպքում արտակարգ դրության մասին կետ ներառելով և որով պահանջվում է հետաձգել կամ երկարաձգել ընտրությունները: Թվում է միայն մի քանի երկիր ընտրությունների մասին օրենքներում ունի արտակարգ դրության վերաբերյալ նման կետեր, սակայն կիբերհարձակումների կամ ընտրություններում մասսայական ապատեղեկատվական քարոզարշավների լույսի ներքո այն ունենալը կարող է ողջամիտ լինել:

Արդյունքում. Վենեսուելի հանձնաժողովի միայն մի քանի անդամ պետություններ են իրենց սահմանադրության կամ օրենսդրության մեջ սահմանում ընտրությունների հետաձգման հնարավորությունն արտակարգ դրության դեպքում, իսկ մի քանի այլ պետություններ՝ բնական աղետների կամ այլ արտակարգ իրավիճակների դեպքում: Համեմատական հետազոտությունը ցույց տվեց, որ նման հետաձգումները ժամանակ առ ժամանակ են տեղի ունեցել:

[CDL-AD\(2019\)019](#), Սլբանիա. Նախագահի՝ ընտրությունների օրերը սահմանելու լիազորությունների մասին Վենեսուելի հանձնաժողովի կողմից իր 120-րդ լիազումար նիստում (Վենեսուելի, 2019 թվականի հոկտեմբերի 11-12) ընդունված կարծիք

ե. Ընտրական իրավունքի փոփոխությունները

28. Փոփոխությունների կատարման ժամկետի մասով խնդիրներից բացի, խնդրահարույց է, որ մարտի և ապրիլի փոփոխությունները ընդունվել էին հապճեպ՝ առանց համապատասխան

² Խորհրդարանը կարող է հետաձգել ընտրությունները արտակարգ դրության ընթացքում:

շահառուների, այդ թվում ընդդիմադիր կողմերի և քաղաքացիական հասարակության հետ անցկացված պատշաճ խորհրդակցության: Շատ կարծիքներում Վենետիկի հանձնաժողովը և ԺՀՄԻԳ-ն ընդգծել են համապարփակ և ընդգրկուն հասարակական խորհրդատվության կարևորությունը հասարակության համար գերակա նշանակություն ունեցող հարցերի, ինչպես օրինակ ընտրական իրավունքի հիմնական փոփոխությունների իրավական շրջանակներն ընդունելիս: Սույն գործով փոփոխություններն արվել էին Արտակարգ դրության պայմաններում՝ սահմանափակելով ժողովրդավարական երկխոսության ժամանակահատվածը և բազմակարծության ազատ արտահայտումը: Մինչ որոշ փոփոխություններ տեխնիկական են, մի քանի այլ փոփոխություններ կարող են զգալի հետևանքներ ունենալ ընտրական իրավունքների (պասիվ և ակտիվ) իրականացման, ընտրության արդյունքների կամ ընտրությունների անցկացման համար: Ինչպես ԺՀՄԻԳ-ն և Վենետիկի հանձնաժողովը շեշտել են նախորդ դեպքերի մասով՝ հաշվի առնելով սույն փոփոխությունների կարևորությունը, ինչպես նաև 2017 թվականի սահմանադրական բարեփոխման արդյունքը առկա ընտրական համակարգի (տե՛ս ստորև 3 և 4) վրա, շատ կարևոր է, որ դրանք տեղի ունենան հանրային խորհրդատվության ընդգրկուն և մանրամասն գործընթացից հետո: Ընտրական իրավունքի հիմնարար տարրերի հապճեպ և ոչ համապարփակ փոփոխությունները, ինչպես օրինակ 2018 թվականի փոփոխությունները, վիճարկում են Թուրքիայի ընտրական համակարգի օրինաչափությունը:

[CDL-AD\(2018\)031](#), Թուրքիա. ընտրական իրավունքի և կից «Ներդաշնակեցման օրենքների»՝ 2018 թվականի մարտին և ապրիլին ընդունված փոփոխությունների մասին Վենետիկի հանձնաժողովի և ԺՀՄԻԳ-ի համատեղ կարծիքը, որն ընդունվել է Ժողովրդավարական ընտրությունների խորհրդի կողմից իր 64-րդ ժողովի ժամանակ (Վենետիկ, 2018 թվականի դեկտեմբերի 13) և Վենետիկի հանձնաժողովի կողմից իր 117-րդ լիազումար նիստի ժամանակ (Վենետիկ, 2018 թվականի դեկտեմբերի 14 և 15)

XI. Խորհրդարանի լուծարումը

Որոշ երկրներում արտակարգ դրության ընթացքում օրենսդրական ժողովների ժամկետը երկարաձգվում է՝ Իտալիա (պատերազմական իրավիճակում), Գերմանիա (պաշտպանության իրավիճակում), Թուրքիա (պատերազմական իրավիճակում), Լեհաստան, Լիտվա (պատերազմական իրավիճակում), Սլովենիա, Հունգարիա և Կանադա (եթե պատգամավորների ավելի քան մեկ երրորդը դեմ չեն դրան): Շատ երկրներում (Գերմանիա, Իսպանիա, Պորտուգալիա, Հունաստան, Լեհաստան, Հունգարիա, Ռուսաստան և Խորվաթիա) արտակարգ դրության ընթացքում խորհրդարանի լուծարումն արգելվում է:

[CDL-STD\(1995\)012](#), Արտակարգ լիազորություններ

121. [...] Վենետիկի հանձնաժողովն ընդգծել է, որ խորհրդարանի գործունեությունը պետք է շարունակվի արտակարգ դրության ժամանակահատվածում և նշել է, որ Խորհրդարանը չպետք է լուծարվի արտակարգ լիազորությունների իրականացման ընթացքում ([CDL-AD\(2016\)006](#), պրբ. 62): [...] Այս սահմանափակումները թույլ չեն տալիս գործադիրին արտակարգ դրությունն օգտագործել որպես ընդդիմության իրավունքները սահմանափակելու պատրվակ:

[CDL-AD\(2019\)015](#), Ժողովրդավարական երկրում Խորհրդարանական մեծամասնության և Ընդդիմության միջև հարաբերությունների բնութագրերը. ստուգացուցակ

14. Պետությունների մեծամասնությունում խորհրդարանը կարող է լուծարվել նախքան օրենսդիրի բնականոն գործունեության ժամկետի ավարտը: Միայն մի քանի պետություններում լուծարումը և արտահերթ ընտրությունները ընդհանրապես հնարավոր չեն նախքան այդ ժամկետի ավարտը: Շատ պետություններում Սահմանադրությունը բացահայտ արգելում է խորհրդարանի լուծարումը պատերազմական իրավիճակի (ռազմական դրության) կամ

արտակարգ դրության ընթացքում:

[CDL-AD\(2007\)037](#), Ընտրության օրը որոշելու մասին Ժողովրդավարական ընտրությունների խորհրդի կողմից իր 22-րդ ժողովում (Վենետիկ, 2007 թվականի հոկտեմբերի 18) և Վենետիկի հանձնաժողովի կողմից իր 72-րդ լիազուսմար նիստում (Վենետիկ, 2007 թվականի հոկտեմբերի 19-20) ընդունված Զեկույց

42. Կոնվենցիան կանխատեսում է ընտրական իրավունքների և ազատությունների սահմանափակումների հնարավորություն, այդ թվում՝ ծայրահեղ իրավիճակներում, ինչպես օրինակ արտակարգ դրության կամ ռազմական դրության ընթացքում ընտրությունների հետաձգման հնարավորությունը (Հոդված 6, պարբերություն 5): Անհրաժեշտ են արտակարգ իրավիճակների պատճառով անհիմն երկարաձգման կամ հետաձգման դեմ երաշխիքներ նախատեսող դրույթներ:

[CDL-AD\(2007\)007](#), Ժողովրդավարական ընտրությունների չափանիշների մասին Կոնվենցիայի, Անկախ պետությունների Համագործակցության անդամ պետություններում ընտրական իրավունքների և ազատությունների վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովի կողմից իր 70-րդ լիազուսմար նիստում (Վենետիկ, 2007 թվականի մարտի 16-17) ընդունված կարծիք

[CDL-AD\(2004\)010](#), Ընտրական չափանիշների, Ընտրական իրավունքների և ազատությունների մասին ԵԸԻԱ կոնվենցիայի նախագծի վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովի կողմից իր 58-րդ լիազուսմար նիստում (Վենետիկ, 2004 թվականի մարտի 11-13) ընդունված կարծիք, պրբ. 37

(...) Այս նոր բաժինը թույլ է տալիս լուծարված խորհրդարանի գումարումը, եթե հայտարարված է արտակարգ դրություն կամ ռազմական իրավիճակ: Այն դեպքերում, երբ նոր Խորհրդարանն արդեն ընտրված է, նախընտրելի է նախատեսել նոր Խորհրդարանի առաջին նիստի անցկացման օրը:

[CDL-AD\(2004\)008](#), Վրաստանի Սահմանադրության փոփոխությունների նախագծի վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովի կողմից իր 58-րդ լիազուսմար նիստում (Վենետիկ, 2004 թվականի մարտի 12-13) ընդունված կարծիք, պրբ. 9 և 10

XII. Քաղաքական կուսակցությունների գործունեությունը

2. Մարդու վերոնշյալ հիմնարար իրավունքների իրականացման սահմանափակումները քաղաքական կուսակցությունների գործունեության միջոցով պետք է համապատասխանեն Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի համապատասխան դրույթներին և այլ միջազգային դաշնագրերին թե՛ առհասարակ, թե՛ հանրային արտակարգ իրավիճակների ժամանակ:

[...] 7. Ոչ մի պետություն չի կարող նախատեսել սահմանափակումներ՝ հիմնվելով միայն իր ներպետական օրենսդրության վրա և անտեսելով իր միջազգային պարտավորությունները: Այս կանոնը պետք է կիրառվի առհասարակ, ինչպես նաև հանրային արտակարգ իրավիճակների ժամանակ: Այս մոտեցումը հաստատվում է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի պրակտիկայով:

[...] 16. Ակնհայտ է, որ երկրում տիրող ընդհանուր իրավիճակը կարևոր գործոն է նման գնահատման համար: Միևնույն ժամանակ, ինչպես արդեն նշվել է նախորդ պարբերություններում՝ եվրոպական զարգացող ժողովրդավարական պրակտիկայի չափանիշները նույնպես պետք է հաշվի առնվեն: Նույնիսկ արտակարգ դրության դեպքում պետության միջազգային պարտավորությունները պետք է պահպանվեն և բացառիկ բնույթի ցանկացած միջոց պետք է ունենա հստակ սահմանված ժամանակավոր ազդեցություն ըստ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 15-րդ հոդվածի:

CDL-PI(2020)003

[CDL-INF\(2000\)001](#), Քաղաքական կուսակցությունների արգելման և լուծարման և նմանատիպ միջոցների վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովի կողմից իր 41-րդ լիազուար նիստում ընդունված Ուղեցույց (Վենետիկ 1999 թվականի դեկտեմբերի 10 – 11)

7(1.13)-րդ հոդվածը թույլ է տալիս «կասեցնել կամ դադարեցնել քաղաքական կուսակցությունների գործունեությունը, որը խոչընդոտում է արտակարգ դրության հայտարարման հիմք ծառայած հանգամանքների վերացմանը ըստ Սահմանադրական դատարանի մասին Հայաստանի Հանրապետության օրենքի: Այս դրույթը խնդրահարույց է: Նախ պետք է շեշտել, որ «քաղաքական կուսակցությունների արգելումը կամ լուծարումը որպես հատկապես ընդգրկուն միջոց պետք է օգտագործվի առավելագույնս սահմանափակ ձևով» և, որ «քաղաքական կուսակցությունների արգելումը կամ պարտադիր լուծարումը կարող է արդարացվել միայն այն կուսակցությունների պարագայում, որոնք կողմ են բռնության կիրառմանը կամ կիրառում են բռնությունը որպես ժողովրդավարական սահմանադրական կարգը տապալելու քաղաքական միջոց՝ դրանով իսկ խախտելով սահմանադրությամբ երաշխավորված իրավունքներն ու ազատությունները»: Մինչ Հայաստանի օրենսդրության համաձայն քաղաքական կուսակցության լուծարումն ընդհանուր առմամբ հնարավոր է համաձայն Սահմանադրության 28-րդ հոդվածի, սույն օրենքում լուծարումն իրականացնելու հնարավորությանն արված հղումը թվում է, թե առաջարկում է, որ արտակարգ դրությունը հավելյալ և հստակ հիմք է տրամադրում քաղաքական կուսակցության գործունեությունը դադարեցնելու համար: Սա անհամատեղելի կլինի արտակարգ դրության բացառիկ և ժամանակավոր բնույթի հետ, որի շրջանակներում պահանջվում են ժամանակավոր, այլ ոչ թե վերջնական միջոցներ:

[CDL-AD\(2011\)049](#), Հայաստանի արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին օրենքի նախագծի վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովի կողմից իր 89-րդ լիազուար նիստում ընդունված կարծիք (Վենետիկ, 2011 թվականի դեկտեմբերի 16-17), պրբ. 30

XII. Օժանդակ նյութեր

Ընդհանուր զեկույցներ

- Արտակարգ լիազորություններ (1995) - [CDL-STD\(1995\)012](#)
- Զինված ուժերի ժողովրդավարական վերահսկողության մասին զեկույց-[CDL-AD\(2008\)004](#)
- Արտակարգ իրավիճակներում մարդու իրավունքների պաշտպանության վերաբերյալ կարծիք-[CDL-AD\(2006\)015](#)
- Անկախ պետությունների համագործակցության անդամ պետությունների ժողովրդավարական ընտրությունների ստանդարտների, ընտրական իրավունքների և ազատությունների վերաբերյալ կոնվենցիայի վերաբերյալ կարծիք -[CDL-AD\(2007\)007](#)
- Ընտրությունների օրն ընտրելու մասին զեկույց-[CDL-AD\(2007\)037](#)
- Սահմանադրական փոփոխության մասին զեկույց-[CDL-AD\(2010\)001](#)
- Իրավունքի գերակայության ստուգացուցակ-[CDL-AD\(2016\)007](#)
- Ժողովրդավարական երկրում Խորհրդարանական մեծամասնության և Ընդդիմության միջև հարաբերությունների բնութագրերը. ստուգացուցակ -[CDL-AD\(2019\)015](#)

Առանձին երկրներին վերաբերող կարծիքներ

- Հայաստան. Հայաստանի արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին օրենքի նախագծի վերաբերյալ կարծիք - [CDL-AD\(2011\)049](#)
- Հայաստան. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների նախագծի մասին առաջին կարծիք (1-7-րդ և 10-րդ գլուխներ) - [CDL-AD\(2015\)037](#)
- Հայաստանի Հանրապետության Ընտրական օրենսգրքում փոփոխությունների նախագծի վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովի և ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ համատեղ կարծիքը - [CDL-AD\(2006\)026](#)
- Ֆինլանդիա. Ֆինլանդիայի Սահմանադրության վերաբերյալ կարծիք -[CDL-AD\(2008\)010](#)
- Ֆրանսիա. «Ազգի պաշտպանության մասին» Ֆրանսիայի սահմանադրական օրենքի նախագծի վերաբերյալ կարծիք - [CDL-AD\(2016\)006](#)
- Վրաստան. Վրաստանի Սահմանադրության փոփոխությունների նախագծի վերաբերյալ կարծիք - [CDL-AD\(2004\)008](#)
- Ղրղզստան. Ղրղզստանի Սահմանադրության փոփոխությունների նախագծի վերաբերյալ կարծիք - [CDL-AD\(2002\)033](#)
- Ղրղզստան. Ղրղզստանի Հանրապետության Սահմանադրության նախագծի վերաբերյալ կարծիք (2010 թվականի մայիսի 21-ին հրապարակված տարբերակ) - [CDL-AD\(2010\)015](#)
- Չեռնոգորիա. Չեռնոգորիայի Սահմանադրության նախագծի մասին միջանկյալ կարծիք - [CDL-AD\(2007\)017](#)

CDL-PI(2020)003

- Չեռնոգորիա. Չեռնոգորիայի Սահմանադրության վերաբերյալ կարծիք - [CDL-AD\(2007\)047](#)
- Ռումինիա. Ռումինիայի Սահմանադրության վերանայման վերաբերյալ օրենքի նախագծի վերաբերյալ կարծիք - [CDL-AD\(2014\)010](#)
- Սերբիա. Սերբիայի Սահմանադրության վերաբերյալ կարծիք - [CDL-AD\(2007\)004](#)
- Թունիս. Թունիսի Հանրապետության Սահմանադրության վերջնական նախագծի վերաբերյալ կարծիք - [CDL-AD\(2013\)032](#)
- Թուրքիա. Պարետային ժամերի կառավարման իրավական շրջանակի վերաբերյալ կարծիք - [CDL-AD\(2016\)010](#)
- Թուրքիա. 2016 թվականի հուլիսի 15-ի ձախողված հեղաշրջումից հետո ընդունված Արտակարգ դրության մասին N°s 667-676 օրենսդրական որոշումների վերաբերյալ ընդունված կարծիք - [CDL-AD\(2016\)037](#)
- Թուրքիա. 2017 թվականի հունվարի 21-ին Ազգային մեծ ժողովի կողմից ընդունված և 2017 թվականի ապրիլի 16-ին Ազգային հանրաքվեի ներկայացվելիք Սահմանադրության փոփոխությունների մասին ընդունված կարծիք - [CDL-AD\(2017\)005](#)
- Թուրքիա. Տեղական ժողովրդավարության իրականացմանն առնչվող Արտակարգ դրության մասին 2016 թվականի սեպտեմբերի 1-ի N° 674 օրենսդրական որոշման դրույթների վերաբերյալ ընդունված կարծիք - [CDL-AD\(2017\)021](#)
- Ուկրաինա. Ուկրաինայի Նախագահի կողմից ներկայացված Սահմանադրությունը փոփոխող Ուկրաինայի օրենքի նախագծի վերաբերյալ կարծիք - [CDL-AD\(2009\)024](#)